40. Կարուածատէրը մէկ խոտհարքից 76104 փութ խոտ ստացաւ, իսկ միւսից—56 անգամ պակաս: Նա երկրորդ խոտհարքից ինչքա՞ն խոտ ստացաւ:

41. Երկու վաճառական միատեսակ գնով մահուդ առանձնաբերը 7915, իսկ երկրորդը—13445 մանէթի: Երկրորդ վաճառականը ինչքա՞ն մահուդ առաւ, եթէ որ առաջինի առածը 1583 արշին է:

42. Գործարանատէրը մէկին 862400 մանէթ էր պարտ. նա իւր պարտքի չորրորդ մասը՝ հաւասարապէս՝ տասնուվեց ամսով վճարեց: Իւրաքանչիւր ամիս նա ի՞նչքան էր վճարում:

43. Մի վաճառական 41454 մանէթի գերան ունէր, հատը երեք մանէթով. նա գերանների չորրորդ մասը ծախեց: Ծախած գերանները բանի՞սն են:

44. Մի շոգենաւ 5712 վերստ պէտքէ անցկենար. նա այդ տարածութեան միայն տասնուերկուերորդ մասն անցաւ: Շոգենաւը բանի՞ ժամ գնաց, եթէ որ իւրաքանչիւր ժամում 17 վերստ ճանապարհ էր կտրում:

45. 25 մշակ 15 օրում 37500 խուրձ ցորեն հնձեցին: Իւրաքանչիւր մշակ օրական քանի՞ խուրձն էր հնձում:

46. 34 դարբին 48 օրում 61689 մետ շինեցին: Իւրաքանչիւր դարբին օրական քանի՞ մետ շինեց:

47. Մի վաճառական չիթ և բաթան ծախեց՝ չիթը—551736 արշ., իսկ բաթանը չիթից—158 անգամ պակաս: Նա բանի՞ թոփ բաթան ծախեց, եթէ որ իւրաքանչիւր թոփը 36 արշին էր:

48. Մի կապալառու ձիան, կովեր և ոչխարներ գնելու համար՝ հաւասարապէս՝ 27216 մանէթ փող ծախեց. ձին նորան 189 մանէթ նստեց, կովը—84, իսկ ոչխարը—2: Նա քանի՞ ձի, քանի՞ կով և քանի՞ ոչխար առաւ:

49. Ալափը չորս գիւղում գարի առաւ՝ առաջին գիւղում—896064 փութ, երկրորդ գիւղում՝ առաջինից՝ 13, երրորդում՝ երկրորդից՝ 16 և չորրորդում էլ երրորդից՝ 12 անգամ պակաս: Նա չորս գիւղում ընդամենը ինչքա՞ն գարի առաւ:

50. Ի՞նչքան շահ կ'բերէ՝ 200 մանէթը, 500 մ., 700 մ., 1200 մ., 2500 մ., 14800 մանէթը, եթէ որ հարիւր մանէթը 5 ման. շահ բերէ:

51. Ի՞նչքա՞ն շահ կ'բերէ՝ 150 մանէթը, 350 մ., 850 մ., 1350 մ., 12750 մանէթը, եթէ որ հարիւր մանէթը 6 ման. շահ բերէ:

52. Ինչքա՞ն շահ կ'բերէ՝ 125 մ., 425 մ., 725 մ., 925 մ., 2425 մ., 9825 մ., եթէ որ հարիւր մանէթը 8 ման. շահ բերէ:

53. Ինչքա՞ն շահ կ'բերէ՝ 10 մ., 30 մ., 120 մ., 580 մ., 940 մ., 8360 մ., եթէ որ հարիւր մանէթը 10 ման. շահ բերէ:

54. Ինչքա՞ն շահ կ'բերէ՝ 1 մ., 5 մ., 7 մ., 9 մ., 13 մ., 29 մ., 53 մ., 96 մ., եթէ որ հարիւր մանէթը 4 ման. շահ բերէ:

55. 100 մանէթը մի տարուայ մէջ 6 մանէթ շահ է բերում: Այդ փողը՝ 6 ամսում, 2 ամսում, 4 ամսում ինչքա՞ն շահ կ'տայ:

56. 100 մանէթը մի տարուայ մէջ 8 ման. շահ է բերում: Այդ փողը՝ 6 ամսում ինչքա՞ն շահ կ'բերէ:

57. 100 մանէթը մի տարուայ մէջ 3 ման. շահ է բերում:

Այդ փողը 3 ամսում, 4 ամսում, 5 ամսում, 6 ամսում, 9 ամսում, 8 ամսում և 10 ամսում ինչքա՞ն շահ կ'ըբերէ:

58. Գինեվաճառը 975 մանէթի գինի առաւ. այդ գինին ծախելուց նա 20 տոկոս օգուտ ստացաւ: Գինեվաճառը գինին որքա՞նով ծախեց:

59. Մի վաճառական իւր ունեցած թէյը ծախելուց, որն իրան 6480 մանէթ էր նստել, 15 տոկոս փնաս ստացաւ: Նա թէյը որքա՞նով ծախեց:

60. Տարեկան 6 տոկոսով տուած գրամագլուխը մի տարուայ մէջ 432 ման. շահ բերեց: Հաճեցրած գրամագլուխը որքա՞ն էր:

61. 8 տոկոսով շահեցնելու տուած գրամագլուխը իւրաքանչիւր տարի 1320 ման. շահ է բերում: Գրամագլուխը որքա՞ն է:

62. 15500 մանէթը մի տարուայ մէջ 1085 ման. շահ է բերում: Այդ փողը ինչքա՞ն տոկոս կ'ըբերէ:

63. 14600 մանէթը մի տարուայ մէջ 1168 ման. շահ է տալիս: Այդ փողը ինչքա՞ն տոկոս բերէ:

64. 9 տոկոսով շահեցնելու տուած գրամագլուխը երկու տարուայ մէջ 2160 ման. շահ բերեց: Այդ գրամագլուխը որքա՞ն է:

65. 6 տոկոսով շահեցնելու տուած գրամագլուխը իւրաքանչիւր տարի 510 ման. շահ է բերում: Տարեկան ինչքա՞ն շահ կ'ըբերէ այն գրամագլուխը, որը երկու անգամ աւելի է և շահեցնելու համար էլ 8 տոկոսով է տուած:

66. 6 տոկոսով շահեցնելու տուած գրամագլուխը իւրաքանչիւր տարի 900 ման. շահ է բերում: Այդ գրամագլուխը բանի՞ տոկոսով պէտք է տալ, որ իւրաքանչիւր տարի 1200 մանէթ շահ ստացուի:

67. Մէկ այրի կին մի տարի ժամանակով 2730 ման. բանկը տուեց: Նա մի տարուց յետոյ ինչքա՞ն շահ կ'ստանայ, եթէ որ բանկը 5 տոկոս է վճարում:

68. Կալուածատէրը մի տարի ժամանակով 1275 ման. բանկը դրեց. մի տարուց յետոյ նա այդ փողը յետ ստացաւ իւր վերայ աւելացած տոկոսների հետ միասին: Կալուածատէրը ինչքա՞ն փող ստացաւ, եթէ որ բանկը 6 տոկոս էր վճարում:

69. Գիւղացին 4 ամիս ժամանակով, 6 տոկոսով, 520 մանէթ պարտք վերցրեց: Նա այդ փողի համար ինչքան շահ պէտք է վճարէ:

70. Վաճառականը 9 ամիս ժամանակով 2150 ման. պարտքը 8 տոկոսով վերցրեց: Նա ընդամենը ինչքա՞ն փող պէտք է վճարէ:

71. Ներքին փոխառութեան տոմսակի ըուն արժէքը 100 մանէթ է և 5 տոկոս էլ շահ է բերում, որը տարուայ մէջ կտրոններով երկու անգամ է ստացւում: Իւրաքանչիւր կտրոնի գինը որքա՞ն է:

72. Ներքին փոխառութեան տոմսուեթը տոմսակներից մէկ-մէկ կտրոն կտրեցին: Վարած կտրոնները ինչքա՞ն գումարի են:

73. Արքունական ըանկի տոմսակների բուն արժէքը 100 ման., 150 ման., 500 ման., 1000 ման., 5000 ման., 10000 ման. և 25000 մանէթ է և բերում է 5 տոկոս, որը տարուայ մէջ կտրոններով երկու անգամ է ստացւում: Այդ տոմսակների կտրոնների արժէքը որքա՞ն է:

74. Մի մարդ ունէր՝ ներքին փոխառութեան երեք տոմսակ և երկու էլ սերի \*): Նա այդ տոկոսաբեր թղթերից ընդամենը ինչքա՞ն շահ էր ստանում մի տարուայ մէջ:

75. 30750 մանէթով առնուած տուելը մի տարուայ մէջ տասը տոկոս ընդհանուր շահ բերեց: Տուելը ինչքա՞ն զուտ օգուտ տուեց, եթէ որ այդ տարուայ մէջ տան վերայ եղած ծախսը 1289 մանէթ է:

76. Ալափը հացթուխին պէտք է ալիւր տայ՝ կամ մի տարի ժամանակով 1475 մանէթի, կամ կանխիկ փողով—ուեթ տոկոս զեղջելով: Հացթուխը ալիւրի համար ինչքան պէտք է վճարէ, եթէ որ ալիւրը կանխիկ փողով առնէ:



\*) Արքունական դանձարանի յիսուն մանէթանոց տոմսակներ, որոնք ամսական 18 կոպ. շահ են բերում:



ԽՆԴԻՐՆԵՐ ԲՈՂՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ:

77. Կոստանդնուպոլսի բնակչաց թիւը 600000 է իսկ Կարին քաղաքինը՝ 540000-ով պակաս: Այդ երկու քաղաքի բնակչաց թիւը ինչքա՞ն է:

78. Աշնանացան ցորենի գրուանքան 9900 հատիկ ունի, իսկ գարնանացանինը—1660 հատիկով աւելի: 26 գրուանքայ գարնանացան ցորենը ինչքա՞ն հատիկ կունենայ:

79. Մի ձիթահանքատէր մէկ գիւղում 789 փութ կտաւահատ առաւ, երկրորդ գիւղում—առաջինից՝ 18 անգամ աւելի, իսկ երրորդում—երկրորդից՝ 9547 փութ պակաս: Երրորդ գիւղում առած կտաւահատը ինչքա՞ն է:

80. Հնձուորները 10՝ միմեանց հաւասար՝ օրավար ցորեն հնձեցին, բոլոր հնձած խրձները նորա 64 դէզ դրին, իւրաքանչիւրի մէջ 60 խուրձ դարսելով: Ամէն մի օրավարից քանի՞ խուրձ ստացուեցաւ:

81. Մի գիւղացի իւր այգուց 544 բլոց խաղող քաղեց. դորա ութերորդ մասը կախան արեց և ծախեց, իսկ մնացածը հնձանում մզեց և ամեն մի կլոց խաղողից 2 թունկի գինի ստացաւ: Գիւղացին քանի՞ թունգի գինի ունեցաւ:

82. Գրադարանի մէջ 16689 գիրք հայերէն է, 1887-ը— ուսերէն, իսկ հայերէնից և ուսերէնից 24 անգամ պակասը—Փրանսերէն: Գրադարանը Փրանսերէն քանի՞ գիրք ունի:

83. Մի վարպետ երկու կապոց պղնձէ թել ունէր՝ մէկը 2000 արշին, իսկ միւսը՝ 407 արշ. պակաս. փոքրիկ կապոցի պղնձէ թելից նա վանդակներ շինեց: Վարպետի շինած վանդակները քանի՞սն են, եթէ որ իւրաքանչիւրին 27 արշին պղնձէ թել գնաց:

84. Մի հարուստ բարեգործ մարդ իւր անունով հիմնած ուսումնարանի շինութեան համար 86765 ման. ծախսեց, իսկ ուսումնարանի ապահովութեան համար դորանից 7 անգամ աւելի փող թողեց: Նա իւր ուսումնարանի համար ընդամենը ինչքա՞ն փող մտնեց:

85. Երեք արկղի մէջ 345 ման. փող կայ. եթէ 28 ման. առաջինից երկրորդի մէջ, իսկ ութ ման. էլ երկրորդից երրորդի մէջ դնենք, այն ժամանակ բոլոր արկղների փողը հաւասար կ'լինի: Իւրաքանչիւր արկղում ինչքա՞ն փող կայ:

86. Երկու քսակում 672 ման. փող կայ. եթէ առաջինից երկրորդի մէջ 312 ման. դնենք, այն ժամանակ երկրորդում առաջինից 5 անգամ աւելի փող կ'լինի: Իւրաքանչիւր քսակի մէջ ինչքա՞ն փող կայ:

87. Երկու շտեմարանի մէջ 1500 չետվերտ ցորեն կայ. երբոր առաջինից 132 չետվերտ ծախեցին, այն ժամանակ նորա մէջ երկրորդից 3 անգամ աւելի ցորեն մնաց: Երկրորդ շտեմարանում ինչքա՞ն ցորեն կար:

88. Մի ուսումնարանում 112 երեսայ կար. երբոր 16 տղայ ևս մտան, այն ժամանակ տղաները աղջկերանցից երեք անգամ շատացան: Ուսումնարանում քանի՞ աղջիկ կար:

89. 75 մշակ մի օրում 1875 խուրձ վուշ ծեծեցին: 47 մշակը ինչքա՞ն վուշ կ'ծեծեն մի օրում:

90. 45 մարդու համար 14 օրուայ ալիւր է պատրաստած: Այդ միւսոյն պաշարը 35 մարդուն որքա՞ն ժամանակ բաւական կ'լինի:

91. 6000 մանէթը 215 օրում ինչքա՞ն շահ կ'բերէ, եթէ որ 6 տոկոսով լինի տրուած, տարին էլ 360 օր հաշուելով:

92. Տաւարի համար կրած խոտը 80 օր բաւական կ'լինի եթէ որ իւրաքանչիւր կովին օրական 25 գրուանքայ խոտ տան: Այդ միւսոյն պաշարը քանի՞ օր կ'բաւականանայ, եթէ որ ամեն մի կովին օրական 20 գրուանքայ խոտ տրուի:

93. Երկու դրամադուլի կար. առաջինը առւտուրի մէջ 16 ամիս մնաց, իսկ երկրորդը—10-ը. առաջինը 1750 ման. էր և բերեց այնքան շահ, որքան՝ երկրորդը: Երկրորդ դրամադուլիւր ինչքա՞ն է:

94. Մէկ գիրք 300 երեսից է բաղկացած և իւրաքանչիւր երեսն էլ իւր մէջ 42 տող է պարունակում: Այդ գիրքը քանի՞ երես կունենայ, եթէ որ իւրաքանչիւրի վերայ 36 տող տեղաւորուի:

95. Մի տան տէր իւր տան ապահովութեան համար 1068

ման. վճարեց: Տունը ինչքա՞ն էր գնահատուած, եթէ որ իւրաքանչիւր 635 ման. ապահովեցրած գումարի համար նա 6 ման. պէտք է վճարէր:

96. Չորագունդը մի տեղ պէտք է գնար. դուրս գալուց 25 օր յետոյ նա նշանակուած տեղից 157 վերստ հեռու էր գտնուում: Ամբողջ տարածութիւնը ինչքա՞ն էր, եթէ որ զօրագունդը օրական 35 վերստ ճանապարհ էր գնում:

97. 47 չետվերտ ցորենը աղալուց 15698 գր. մաքուր ալիւր է տալիս: 126 չետվերտ ցորենը ինչքա՞ն ալիւր կ'տայ:

98. 28 մշակ 156 օրում մի կամուրջ շինեցին: Քանի՞ մշակ պէտք է վարձել, որ միւսնոյն կամուրջը 112 օրում շինեն:

99. Փայտավաճառը մի անտառ առաւ և առաջին անգամ բոլոր ծառերի տասնուերեքերորդ մասը կտրել տուեց, իսկ երկրորդ անգամ—քսանուչորսերորդ մասը: Նա առաջին անգամ քանի՞ ծառ կտրեց, եթէ որ երկրորդ անգամ կտրած ծառերն 754 հատ են:

100. Հնձուորները առաջին դաշտում 635 խուրձ ցորեն հնձեցին, երկրորդ դաշտում—առաջինից՝ 7 անգամ, իսկ երրորդում երկրորդից 257 խուրձ աւելի: Նոքա ընդամենը քանի՞ խուրձ ցորեն հնձեցին:

101. Մի վաճառական երկու անգամ սուրճ ստացաւ՝ առաջին անգամ—37 տակառ, իւրաքանչիւրը 17 փթանոց, իսկ երկրորդ անգամ—48 տակառ, իւրաքանչիւրը 16 փթանոց: Նա ընդամենը որքա՞ն սուրճ ստացաւ:

102. Ալափը մի կալուածատիրոջից՝ չետվերտը 10 մանէթով ցորեն ստացաւ, որի մէջ և քսան տոկոս զեղջ ունեցաւ: Նա ինչքա՞ն ցորեն առաւ, եթէ որ կալուածատէրը նորան 1592 ման. զեղջեց:

103. Մի դրամագլուխ երկու հաւասար մասն է արած. առաջինը շահեցնելու համար 6 տոկոսով է տրուած, իսկ երկրորդը—8. առաջինը երկրորդից 150 ման. պակաս շահ է բերում: Գրամագլուխը որքա՞ն է:

104. Հարկահանը մի գիւղից 324 ման. հաւաքեց, միւսից՝ 12 անգամ պակաս, քան թէ առաջինից, իսկ երրորդից—38 ան-

գամ աւելի, քան թէ երկրորդից: Երեք գիւղից նա ընդամենը ինչքա՞ն փող հաւաքեց:

105. Մի շինութիւն հինգ բնակարան ունի. մէկ բնակարանի համար մի տարուայ մէջ ամսական 47 ման. էին ստանում, միւսի համար—68, երրորդի համար—75, չորրորդի համար—123, իսկ հինգերորդի համար—236 ման.: Այդ տունը տարեկան որքա՞ն զուտ օգուտ բերեց, եթէ որ տան վերայ եղած մի տարուայ ծախքը 2857 մանէթ է:

106. Երեք եղբայր մի կալուածք գնեցին. մեծ եղբայրը դորա համար 485689 ման. տուեց, միջնակը—125484, իսկ կրտսերը—երկու առաջիններից 19 անգամ պակաս: Կալուածքի համար ինչքա՞ն վճարեցին:

107. Տուն շինելու համար առաջ 25375 աղիւս բերին, իսկ յետոյ—46925 հատ. երեւեցաւ, որ բերած աղիւսների քսանուհինգերորդ մասը ջարդուած է: Զ'կոտրատուած աղիւսները քանի՞ն են:

108. 7 գրուանքայ ցորենը 138600 հատիկ ունի, իսկ 12 գր. գարին—154800 հատիկ: Մի գրուանքայում ո՞ր հատիկից քիչ է և այն էլ ո՞րքանով քիչ:

109. 720 մանէթի՝ 16 արշ. կարմիր, 48 արշ. սև և 60 արշին մոխրագոյն մահուդ է առնուած. կարմիր մահուդը երկու անգամ սևից և երեք անգամ մոխրագոյնից—թանգ է: Կարմիր մահուդի արշինը ինչքա՞ն արժէ:

110. 26 փութ ալիւրը և 18 փութ իւղը 356 ման. արժէ: Ալիւրի գինը որքա՞ն է, եթէ որ եօթը փութ ալիւրը այնքան արժէ, ինչքան որ երկու փութ իւղը:

111. Մի վաճառական բաղաբուր 9736 գլուխ կով և եզը ծախեց. ծախած եզները կովերից 6978 գլուխ պակաս են: Քանի՞ կով և քանի՞ եզն է ծախուած:

112. Երկու կայարանից միւսնոյն ժամանակ՝ միմեանց հանդէպ՝ երկաթուղու երկու կառախումբ դուրս եկան. մէկը մի ժամում 28 վերստ էր գնում, իսկ միւսը—29: Նոցա դուրս գալուց 14 ժամ յետոյ այդ կառախմբերը միմեանցից ինչքա՞ն հեռու կ'գտնուէին, եթէ որ կայարանների միջի տարածութիւնը 1015 վերստ է:

113. Մի գործարանատէր իւր տղամարդ մշակներին 2584 ման. տուեց, իսկ կինարմատներին—1896 ման. պակաս. տղամարդկանցից իւրաքանչիւրին նա 19 ման. վճարեց, իսկ կին մշակներից ամեն մէկին—8 ման.: Գործարանում քանի՞ հոգի փող ստացաւ:

114. Մի կալուածատէր իւր պարտքի հաշուում մէկ պարտատիրոջ 5349 ման. տուեց, միւսին—2157 ման., իսկ երրորդին—3183 ման.: Կալուածատէրը դարձեալ ինչքա՞ն պարտ մնաց, եթէ որ նա այդպիսով պարտքի միայն եօթներորդ մասը վճարեց:

115. Բանկի մէջ 9425 հատ երեք մանէթանոցը և 4785 քսանուհինգ մանէթանոցը փոխեցին հարիւր մանէթանոց թղթագրամների հետ: Քանի՞ հատ հարիւր մանէթանոց թղթագրամներ ստացան:

116. Մի խմբագիր իւր լրագրի համար տարեկան գաւառների բաժանորդներից 88281 մանէթ ստացաւ, իսկ քաղաքացիներից—29769 ման. պակաս: Լրագիրը տարեկան քանի՞ բաժանորդ ունէր, եթէ որ գաւառների բաժանորդների համար լրագրի տարեկան վճարը 17 ման. էր, իսկ քաղաքի համար—16:

117. Մի կապալառու երեք ժամանակամիջոցում 123525 չեովերտ գարի հասցրեց—առաջին անգամ բոլոր քանակութեան տասնուհինգերորդ մասը, իսկ երկրորդ անգամ առաջինից 12 անգամ աւելի: Երրորդ ժամանակամիջոցին կապալառուն ինչքա՞ն գարի հասցրեց:

118. Մի մուշտակակար 3276 ոչխարի մորթի ունէր. նա դոցա իններորդ մասը մուշտակների, իսկ մնացածները—կիսամուշտակների վերայ գործածեց. իւրաքանչիւր մուշտակին 7, իսկ իւրաքանչիւր կիսամուշտակին՝ 4 մորթի գնաց: Մուշտակակարը քանի՞ մուշտակ և քանի՞ կիսամուշտակ կարեց:

119. Ամբարի մէջ ցորենի, գարու և հաճարի ջուռներ կային դարսած, ընդ ամենը 7298 հատ. երբ որ ամբարից 1359 ջուռալ ցորեն, 310 ջուռալ գարի և 391 ջուռալ հաճար դուրս տարան, այն ժամանակ մնացած ցորենը, գարին և հաճարը հաւա-

սար եղան: Ամբարում որքա՞ն ցորեն, որքա՞ն գարի և որքա՞ն հաճար կար:

120. Մի կալուածատէր շատ մշակներ վարձեց և երեք օրում 2496 գարնանային ցորենի խուրձ հնձել տուեց. առաջին՝ օրը 9 ժամ բանեցին, երկրորդ օրը— ութ: Երրորդ օրը քանի՞ ժամ բանեցին, եթէ որ իւրաքանչիւր ժամին 104 խուրձն էին հնձում:

121. Միւկնոյն երկարութիւն ունեցող երեք թոփ շոր 486 մանէթով է առնուած. առաջին թոփի արշինին 6 ման. է վճարած, երկրորդի արշինին—5, իսկ երրորդ թոփի արշինին—7: Իւրաքանչիւր թոփ շորը ինչքա՞նով է առնուած:

122. 37 օրում 17 կովի և 8 ձիու համար 19795 գրուանքայ խոտ է գնացել: Մի կովին օրական ինչքա՞ն խոտ էին տալիս, եթէ որ իւրաքանչիւր ձիուն օրական տուածը 18 գրուանքայ է:

123. Մի խանութում 3265 մանէթի կարի մեքենաներ կային՝ հատը 23 մանէթանոց, 38 ման., 64 ման. և 85 ման.: առաջին գնի կարի մեքենաները 368 մանէթի էին, երկրորդինը—684, երրորդինը—768, իսկ չորրորդինը—մնացած գումարի: Խանութումը ընդամենը քանի՞ կարի մեքենայ կար:

124. Մի վաճառական չորս թոփ թաւիշ ծախեց, արշինը 12 մանէթով, և բոլորի համար 1944 մանէթ փող ստացաւ առաջին թոփը 45, երկրորդը—38, իսկ երրորդը 42 արշին թաւիշ էր: Չորրորդ թոփը ինչքա՞ն թաւիշ ունէր:

125. Մի հարուստ մարդ 6480 գլուխ ոչխար ունէր. նա իւր հօտի հինգերորդ մասը առաջին օրը խուզել տուեց, իններորդ մասը—երկրորդ օրը, տասնուերկուերորդ մասը—երրորդ օրը, իսկ մնացած ոչխարներն էլ խուզել տուեց՝ օրական 654 գլուխ: Ոչխարի բոլոր հօտը քանի՞ օրում խուզուեց:

126. Մէկ խանութ միակերպ քանակութեամբ երեք տեսակ մոմ բերին՝ գրուանքան չորսնոց, հինգնոց և վեցնոց. բոլոր մոմերը 27 արկղների մէջ էին դարսած, ամեն մէկում—146 գրուանքայ: Բոլոր բերած մոմերն քանի՞սն էին:

127. Մի կալուածատէր մէկ խոտհարքից հարել տուեց, 7436, միւսից—6492, իսկ երրորդից—5917 փութ խոտ. բոլոր

խոտը դէպեր դրին, իւրաքանչիւրի մէջ 567 փուլթ: Չորացած խոտի դէպերը ընդամենը բանի՞սն էին, եթէ որ 245 փուլթ կա- նաչ խոտը 49 փուլթ չոր խոտ էր տալիս:

128. Մի վաճառական 420 մանէթի թաւիչ գնեց, արշինը 15 մանէթով: այդ թաւիչի ինն արշին ծախեց, արշինը 12 մա- նէթով: Նա մնացածը ի՞նչ գնով ծախեց, եթէ որ ամբողջ թոփի մէջ 11 մանէթ օգուտ ստացաւ:

129. Մի կապալառու 3 չեփերտ ցորեն աղալ տուեց և իւրաքանչիւր չեփերտից 288 գրուանքայ՝ ալիւր ստացաւ. նա բոլոր ալիւրը իւր մշակների համար հաց թխել տուեց: Այդ հա- ցը բանի՞ օր բաւական կ'լինի, եթէ որ 16 գրուանքայ ալիւրից նա 24 գրուանքայ հաց էր ստանում և իւրաքանչիւր օր էլ 216 գրուանքայ հաց էր բաժանում:

130. Կարսից մինչև Կարին 204 վերստ է: Այդ բաղաբնե- րից միւսնոյն ժամանակ, միմեանց հանդէպ, ձիով երկու ճանա- պարհորդներ դուրս եկան. Կարսից գնացող ճանապարհորդը օրական 46 վերստ էր գնում, իսկ Կարինից դուրս եկողը—56 վ.: ճանապարհորդները բանի՞ օրից յետոյ կ'հանդիպեն և թէ նոցա- նից ամէն մէկին էլ բանի՞ վերստ կ'մնայ մինչև նշանակած տեղ հասնելը:

131. Մի գինեվաճառ 18487 շիշ կարմիր և մի քանի շիշ էլ սպիտակ գինի ունէր. նա 584 շիշ կարմիր և 295 շիշ սպիտակ գինին ծախեց: Գինեվաճառը ի՞նչքան սպիտակ գինի ունէր, եթէ որ ծախած գինին բոլոր ունեցածի քսանուկեցերորդ մասն էր կազմում:

132. Մի մարդ իւր գործարանի համար պղինձ և երկաթ առաւ՝ պղինձը—757 փուլթ, փուլթը 24 մանէթով, իսկ երկաթը —3468 փուլթ: Այդ ծախսի համար նա ինչքա՞ն փող մտխեց, եթէ որ 2592 փուլթ երկաթը այնքան արժէր, ինչքան որ 756 փուլթ պղինձը:

133. Մի գիւղացի երկու վաճառականի վերայ իւր ծա- խեց, առաջինը առաւ 14 փուլթ, փուլթը 10 մանէթով, իսկ երկրորդը մնացած իւրը, փուլթը 9 մանէթով: Գիւղացին բոլոր իւրը ինչքա՞նով ծախեց, եթէ որ առաջին վաճառականի առած իւրը բոլոր ունեցած իւրի հինգերորդ մասն էր:

134. Արբունական մի քանի մեծ բնակարաններ տաքաց- նելու համար հաշուեցին 9500 մանէթով 475 սաժ. կաղնի փայտ առնելը բայց յետոյ մտադրութիւնները փոխեցին և միւսնոյն փողով 43 սաժ. կաղնի և միքանի սաժէն կեչի փայտ առան: Առած կեչի փայտը ինչքա՞ն է, եթէ որ դորա ամէն մի սաժէնի համար՝ կաղնի փայտի սաժէնից՝ 2 մանէթ պակաս վճարեցին:

135. Մէկ վաճառական մի բրդավաճառի վերայ բուրդ ծախեց. առաջ իւր ունեցած 65 հակը բրդի համար 20,475 մանէթ խնդրեց, իւրաքանչիւր հակի մէջ 21 փուլթ հաշուելով, իսկ վերջը՝ ծախելու ժամանակ՝ այդ գուժարից այնքան մանէթ զեղջեց, ինչքան որ առնողը առաջին գնով պէտք է 182 փուլթ բրդի համար վճարէր: Բուրդ առնողին բրդի փուլթը ինչքա՞ն նստեց:

136. Վաճառականը երկու գնողի վերայ մի թոփ դրափ ծախեց. մէկին 29 արշին տուեց, արշինը 13 մանէթով, միւսին —մնացածը՝ արշինը 11 մանէթով և ընդամենը 152 մանէթ օգուտ ստացաւ: Ամէն մի թոփի մէջ ինչքա՞ն դրափ կար, եթէ որ դորա արշինը վաճառականին 9 մանէթ էր նստել:

137. 14 սաժէն եղէնի փայտը այրուելիս այնքան տաքու- թիւն է տալիս, ինչքան որ 17 սաժ. կեչի փայտը: Քանի սաժէն եղէնի փայտ է հարկաւոր, որ 204 սաժ. կեչի փայտին փոխա- րինէ:

138. Մի կալուածատէր իւր առած 1584 օրավար հողը ծախեց, օրավարը 68 մանէթով, ծախելիս նա իւրաքանչիւր 13 օրավարից այնքան փող ստացաւ, ինչքան որ ինքը 17 օրավարի համար վճարել էր: Կալուածատէրը այդ ծախելուց ինչքա՞ն օգուտ ստացաւ:

139. Վաճառականը 27 ձենապակեայ լապտեր գնեց. հատը 24 մանէթով. դոցա հետ նա մի քանի բրոնզէ լապտերներ ևս առաւ և բոլորի համար 1404 մանէթ վճարեց: Վաճառականը բանի՞ բրոնզէ լապտեր գնեց, եթէ որ 14 հատ ձենապակեայ լապտերը այնքան արժէ, ինչքան որ 8 բրոնզէ լապտերը:

140. Զօրբին հաց հասցնող կապալառուն մէկ կալուածա- տիրոջից առաւ՝ 1962 մանէթով 327 չեփերտ ցորեն, երկրոր- դից 2138 մանէթով 159 չեփերտ ցորեն և 296 չեփերտ գարի,

իսկ երրորդից—138 չետվերտ ցորեն և 293 չետվերտ գարի: Նա երրորդ կալուածատիրոջը ինչքա՞ն պէտք է վճարէր, եթէ որ բոլոր երեք կալուածատէրերի ցորենի և գարու գները միևնոյն են:

141. Զօրքի համար ձի առնողը՝ մի ձիատիրոջ 52 հատ ձիու համար միատեսակ գին առաջարկեց, միայն ձիատէրը չը-համաձայնեց և ծախեց բոլոր ձիանը առանձին—առանձին, որի պատճառով նա 1370 մանէթ առաջարկածից աւելի ստացաւ: Զի առնողը իւրաքանչիւր ձիու համար ինչքա՞ն առաջարկեց, եթէ որ բոլոր ձիերի չորրորդ մասը ծախուած է՝ հատը 215 մանէթով, 18 ձին՝ իւրաքանչիւրը 95 մանէթով, իսկ մնացած ձիանն էլ՝ ամէն մէկը 185 մանէթով:

142. Մի գիւղացի 15 օրավար ցորեն ցանեց, իւրաքանչիւր օրավարում 8 չետվերիկ. բոլոր ստացած ցորենի երրորդ մասը նա աղաց և 180 փութ ալիւր ստացաւ: Յորենը մէկին ինչքա՞ն օգուտ տուեց, եթէ որ 10 չետվերիկ ցորենից 9 փութ ալիւր դուրս եկաւ:

143. Մի կապալառու 40 փողոց լուսաւորելու համար 9 ամսով քաղաքի հետ պայման կապեց, որի պատճառով 792 մանէթ գրաւական տուեց. երեք փողոցից իւրաքանչիւրում 58 լապտեր կար, երկուսումը—բսանուեթնական, տասնուերկուսումը—տասնուվեցական, իննումը—բսանուչորսական, իսկ մնացած փողոցներում—ութնական: Քաղաքը ամսական իւրաքանչիւր լապտերի համար ինչքա՞ն պէտք է վճարէր, եթէ որ կապալառուի գրաւականը իրան հասանելիք բոլոր փողի տասնուեթներորդ մասն էր կազմում:

144. Զանգակներ ձուլելու համար 39312 փութ զանգակի խառնուրդ գործածեցին. առաջին 28 զանգակի համար հաւասար կերպով բոլոր խառնուրդի տասն և ութերորդ մասը գործ դրին. հետեւեալ 26 զանգակներից իւրաքանչիւրի համար—30 փութ աւելի, քան թէ առաջին 28 զանգակներից իւրաքանչիւրի համար, իսկ մնացած զանգակներից ամէն մէկի համար էլ—195 փութ: Ընդամենը քանի՞ զանգակ էր ձուլած:

145. Մի գործարանատէր երեք շոգենաւ քարածուխ առաւ. առաջին շոգենաւում 19,748 փութ քարածուխ կար, երկրորդումը —18,345, իսկ երրորդումը—17,479 փութ: Շոգենաւը դատար-

կելու համար գործարանատէրը առաջ 12 հոգուց բաղկացած մի խումբ մշակներ ուղարկեց, իսկ երկու օրից յետոյ էլ մի ուրիշ խումբ եկաւ: Երկրորդ խմբի մէջ քանի՞ մշակ կար, եթէ որ բոլոր նաւերը 6 օրում՝ դատարկուեցան, որի ժամանակ առաջին խմբի ամէն մի մշակը օրական 436 փութ, իսկ երկրորդ խմբի մշակը 465 փութ ածուխ էր հանում:

146. Մի գործարանատէր երկու վաճառականի վերայ մետաքսեայ ապրանք ծախեց. առաջինին տուեց իւր պատրաստած կարմիր թոփի իններորդ, և դեղնագոյնի էլ տասնուվեցերորդ մասը, իսկ երկրորդին—կարմրից՝ վեցերորդ և դեղնագոյնից՝ չորրորդ մասը: Նա երկրորդ վաճառականին ընդամենը ինչքա՞ն մետաքսեայ ապրանք տուեց, եթէ որ առաջինը կարմիր թոփից 12748, իսկ դեղնագոյնից 6324 արշին առաւ:

147. Վաճառականը միմեանց հետ երկու տեսակ սուրճ խառնեց. առաջինը 17 փութ էր, փութը 24 մանէթանոց, իսկ երկրորդը—28 փութ, փութը՝ 16 մանէթանոց. բոլոր խառնուրդ սուրճը նա միատեսակ գնով ծախեց և 179 մանէթ օգուտ ստացաւ: Նա խառնուրդ սուրճի փութը ի՞նչ գնով էր ծախում:

148. Երեք եղբայր միմեանց մէջ 49,500 մանէթը բաժանեցին այնպէս, որ միջնակին մեծից 3792 մանէթ, իսկ կրտսերին՝ միջնակից 3540 մանէթ աւելի ընկաւ: Իւրաքանչիւր եղբայր ինչքա՞ն ստացաւ:

149. 5376 տակառ ջուր պարունակող ջրամբարի մէջ երեք խողովակ են տարած. ջրամբարը առաջին խողովակով լցւում է 112, երկրորդով՝ 96, իսկ երրորդով՝ 84 ժամում: Զրամբարը քա՞նի ժամում կ'լցուի, եթէ որ բոլոր խողովակները միանգամից բաց լինին:

150. Ալափը 47 չետվերտ՝ 9 մանէթանոց՝ ցորենը մի ուրիշ տեսակ 16 չետվերտ ցորենի հետ խառնեց, նա բոլոր խառնուրդը ծախեց՝ չետվերտը 12 մանէթով, որից և 109 մանէթ օգուտ ստացաւ: Ալափին երկրորդ տեսակ ցորենի չետվերտը ինչքա՞ն նստեց:

151. Երկու կալուածատէր միատեսակ գնով 480 օրավարաչափ անտառ գնեցին. առաջինը իւր մասի համար 21120

մանէթ վճարեց, իսկ երկրորդը—18480 մ.: Իւրաքանչիւրը քանի՞ օրավարաչափ անտառ դնեց:

152. Երեք հարեւան գիւղի բնակիչներ կամուրջ շինելու համար 1050 մանէթ վճարեցին: Իւրաքանչիւր գիւղ, պայմանի համաձայն, պէտքէ այնքան անգամ քիչ վճարէր, ինչքան անգամ նա կամրջից հեռու էր: Ամէն մէկ գիւղը ինչքան վճարեց, եթէ որ առաջին գիւղը կամրջից—մէկ, երկրորդը—2, իսկ երրորդը—4 վերստ հեռու է:

153. Երեք եղբայր, իւրեանց հօր կտակի համաձայն, միմեանց մէջ 56,448 մանէթը պէտք է բաժանէին իրանց տարիքին համեմատ: Իւրաքանչիւր եղբայր ինչքան կ'ստանայ, եթէ որ մեծ եղբայր 48 տարեկան է, միջնակը—36, իսկ կրտսերը—28:

154. Մի փայտավաճառ 72,597 կեչի. կաղնի և եղևնի գերաններ ունի. կաղնի գերանները կեչի գերաններից 5 անգամ, իսկ եղևնիները կաղնու գերաններից 3 անգամ աւելի են: Նա իւրաքանչիւր տեսակից քանի՞ գերան ունի:

155. Հնձուորները մի օրում 750 խուրձ ցորեն են հնձում: Նոքա 450 դէզ ցորենը քանի՞ օրում կ'հնձեն, եթէ որ իւրաքանչիւր դէզում 60 խուրձ լինի:

156. Մի մեքենայ 3 ժամում 4320 մետր է պատրաստում: Նա 15 օրում քանի՞ մետր կ'շինէ, եթէ որ օրական 18 ժամ բանի:

157. 200 մանէթը 8 ամսում 24 մանէթ շահ է բերում: 72 մանէթ շահը 4 ամսուայ մէջ ի՞նչ դրամագլխից կ'ստացուի:

158. 12 մեքենան 45 օրում 25,395 սաժ. պղնձէ թել կ'հանեն: Հանեցին 36 օրում 8 մեքենան ինչքան պղնձէ թել կ'հանեն:

159. 30 մշակ 24 օրում 360 սաժ. փայտ կարող է կոտորել, եթէ բոլորը օրական 10 ժամ աշխատեն: 40 մշակը 18 օրուայ մէջ ինչքան փայտ կ'կոտորեն, եթէ որ օրական 8 ժամ բանեն:—

160. 28 գրաշար 24 օրում 5880300 տառ են շարում, օրական 10 ժամ աշխատելով: 35 գրաշարը 32 օրում քանի՞ տառ կ'շարեն, եթէ որ օրական 12 ժամ աշխատեն:

161. 16 մշակ, օրական 9 ժամ բանելով, ամբարից 5 օրուայ մէջ 13,500 փութ ցորեն հանեցին. դորանից յետոյ չորս մշակ աշխատանքից հեռացան, իսկ մնացածները մնացած ցորենը 3

օրում դուրս տուին, օրական 10 ժամ աշխատելով: Ամբարից ընդամենը քանի՞ փութ ցորեն է հանած:

162. Մի արհեստանոցում 18 լապտեր կայ. եթէ այդ լապտերները օրական 6 ժամ վառուին, այն ժամանակ պատրաստի նաւթը 40 օր կ'բաւականանայ: Այդ միւսնոյն նաւթը քանի՞ օրում կ'վերջանայ, եթէ որ 12 լապտեր վառուի՝ օրական 8 ժամ:

163. Հրատարակիչը սպարանին մի գիրք տուեց,—որը 576 երես ունէր, իւրաքանչիւր երեսի վերայ—45 տող, իսկ իւրաքանչիւր տողում—64 տառ, — և խնդրեց այդ միւսնոյն գիրքը այնպէս տպել, որ իւրաքանչիւր երեսի վերայ միայն 40 տող լինի, իսկ իւրաքանչիւր տողում—48 տառ: Գրքի նոր տպագրութեան մէջ քանի՞ երես կ'լինի:

164. Վաճառականը իւր պարտքը վճարելու համար պարտատիրոջը առաջարկեց, միւսնոյն գնի՝ կամ 127, կամ 215 արշին մահուդ. առաջին դէպքում վաճառականը 144 ման. պէտք է աւելացնէր, իսկ երկրորդ դէպքում 120 մանէթ յետ պէտք է ստանար: Վաճառականի պարտքը ինչքան էր:

165. Պետերբուրգից Վարշաւ գնացող երկաթուղու կառուցումը մի ժամում 27 վերստ էր գնում. իւր դուրս գնալուց 15 ժամ յետոյ Վարշաւից եկող կառուցմբին պատահեց, որը մի ժամում 32 վերստ էր անցնում: Պետերբուրգից մինչև Վարշաւ — երկաթուղու գծով—քանի՞ վերստ է, եթէ որ Վարշաւի կառուցումը Պետերբուրգի կառուցմբից 5 ժամ առաջ դուրս եկաւ:

166. 20,000 մանէթանոց դրամագլուխը երկու մասն է արած. առաջինը, 6 տոկոսով, տարեկան 720 մանէթ օգուտ է բերում. երկրորդը 640 մանէթ շահ է տալիս: Երկրորդ մասը ինչքան տոկոս է բերում:

167. Երկու գրագիր մի ձեռագիր արտագրեցին. առաջինը օրական 7 թերթ էր արտագրում, իսկ երկրորդը—9, երկրորդը առաջինից 16 օր յետոյ սկսեց աշխատել. Ձեռագիրը քանի՞ թերթ էր, եթէ որ իւրաքանչիւր գրագիր հաւասար կերպով արտագրեց:

168. Երկու շոգենաւ, մէկն ապրանքակիր, իսկ միւսը մարդակիր, միաժամանակ միմեանց հանդէպ դուրս եկան և 16 ժամից յետոյ պատահեցին. մարդակիր շոգենաւը ապրանքակիր շոգենաւի

նաւից ժամը 9 վերստ աւելի էր գնում: Իւրաքանչիւր շոգենաւ մինչև հանդիպելը ինչքան անցկացաւ, եթէ որ երկու նաւահանգստի միջի տարածութիւնը 336 վերստ է:

169. Մի բաւկում 325 մանէթ պակաս փող կար. երբոր նորա մէջ 56 մանէթ դրին, այն ժամանակ ստացուած գումարը 325 մանէթից այնքանով աւելացաւ, ինչքանով որ առաջ 325 մանէթից պակաս էր: Քսակի մէջ ինչքան փող կար:

170. Երեք եղբայր միմեանց մէջ 7200 մանէթը այնպէս բաժանեցին, որ մեծ եղբօրը չորս անգամ պակաս ընկաւ, քան թէ մնացածներից իւրաքանչիւրին: Իւրաքանչիւր եղբայր ինչքան փող ստացաւ:

171. 4080 օրավարաչափ տեղ բռնող անտառը երեք բաժին է արած. առաջին բաժնի 6 օրավարի գինը երկրորդ բաժնի 8 օրավարի գինն է հաւասար. իսկ երկրորդ բաժնի 8 օրավարի գինն էլ երրորդ բաժնի 10 օրավարի գինն: Իւրաքանչիւր բաժինը քանի՞ օրավար է, եթէ որ բոլոր բաժինների արժողութիւնը միատեսակ է:

172. Երկու վաճառական ընկերութեամբ թէյ գնեցին. մէկը 10000 մանէթ տուեց, իսկ միւսը—12000. երբոր այդ թէյը ծախեցին և ստացած օգուտը իւրեանց տուած փողի համեմատ բաժանեցին, այն ժամանակ երկրորդը առաջինից 400 մանէթ աւելի օգուտ ստացաւ: Իւրաքանչիւր վաճառականի ստացած օգուտը ինչքան է:

173. Երկու վաճառական ընկերութեամբ շաքար առան, առաջինը 19250 մանէթ փող տուեց, իսկ երկրորդը—17,875 ման.: Շաքարը ծախելուց նոքա վնաս կրեցին, որը միմեանց մէջ իւրեանց վերեկած փողի համեմատ բաժանեցին. երկրորդ վաճառականը առաջինից 385 մանէթ պակաս վնաս ստացաւ Իւրաքանչիւր վաճառական ինչքան վնաս տուեց:

174. 1000 մանէթի 120 գլուխ կով և ոչխար է առնուած. ամէն մի կովին 35 մանէթ է տուած, իսկ ոչխարին—3: Քանի՞ կով և քանի՞ ոչխար են առել:

175. Վաճառականը երկու տեսակ սիսեռից 85 չետվերտ խառնուրդ կազմեց. խառնուրդ սիսեռը առանց օգուտի և վնասի ծախուեց՝ չետվերտը 13 մանէթով. մէկ տեսակ սիսեռի չետ-

վերստը 9 մանէթ արժէր. իսկ միւսինը—14: Խառնուրդի համար մէկից և միւսից քանի՞ չետվերտ սիսեռ գնաց:

176. Մի վաճառական երկու թոփի մէջ 63 արշին կերպաս ունէր. մէկ թոփ կերպասի արշինը 16 մանէթ արժէր, իսկ միւսինը—18. Բոլոր կերպասը նա 1245 մանէթով ծախեց և 185 մանէթ օգուտ ստացաւ: Իւրաքանչիւր թոփում քանի՞ արշին կերպաս կար:

177. Բերդի մէջ 615 զինուորի համար 65 օրուայ հացի պաշար էր պատրաստած: Այդ պաշարը ուտելու օրից 17 օր յետոյ զօրքը 375 մարդով աւելացաւ: Մնացած պաշարը բոլոր զօրքին քանի՞ օր բաւական կ'լինի:

178. Մի վաճառական 2235 մանէթով 129 արշին կապոյտ և 148 արշին մոխրագոյն դրափ առաւ: Կապոյտ դրափի արշինին նա ինչքան վճարեց, եթէ որ կապոյտի մէկ արշինը և մոխրագոյնի էլ նոյնպէս մի արշինը 16 մանէթ արժէ:

179. Մի համայնք երեք գիւղից է բաղկացած. առաջին և երկրորդ գիւղում կայ՝ 534, առաջինում և երրորդում 541, իսկ երկրորդում և երրորդում—523 տուն: Իւրաքանչիւր գիւղում քանի՞ տուն կայ:

180. Մի վաճառական իւրաքանչիւր 7 արշին ժապաւէնը 13 մանէթով առնում էր և իւրաքանչիւր 9 արշինը 19 մանէթով ծախում: Նա քանի՞ արշին ժապաւէն առաւ, եթէ որ 64 մանէթ օգուտ ստացաւ:

181. Ջրի աւազանը երկու խողովակ է տարած. եթէ առաջինը 3 ժամ և երկրորդը 4 ժամ բացանենք, այն ժամանակ աւազանի մէջ 560 դուր ջուր կ'լծափուի. բայց եթէ առաջին խողովակը բաց անենք 4 ժամ, իսկ երկրորդը—3, այն ժամանակ աւազանը 546 դուր ջուր կ'մտնի: Ամէն մի խողովակ մի ժամում ինչքան ջուր է տալիս:

182. Մի փայտավաճառ 14000 մանէթով 70 օրավարաչափ անտառ առաւ, որից շինութեան համար գերաններ պէտքէ կտրատել տար. նա այդ անտառը երկու բաժին արեց և 15640 կտրատելով ծախեց: Բաժինները ինչ մեծութիւն ունէին, եթէ որ առաջինը առածի գնից՝ 10, իսկ երկրորդը 15 տոկոսով աւելի ծախեց:

183. Մի դրամագլուխ երկու մասն է արած, որոնցից առաջինը երկրորդից երկու անգամ աւելի է. առաջինը շահեցնելու համար 6 տոկոսով է տրուած, իսկ երկրորդը—10. առաջինը՝ երկրորդից՝ 360 մանէթ աւելի շահ է բերում: Շահեցնելու տուած դրամագլուխը ինչքա՞ն է:

184. Երեք վաճառական ընկերութեամբ առևտուրի համար 18480 մանէթ փող վերեկան. երկրորդը վերեկաւ այն գումարի 20 տոկոսը, որն առաջինը բերեց, իսկ երրորդը այն գումարի 25 տոկոսը, որն առաջին երկուսը վերեկան: Իւրաքանչիւրի գումարը որքա՞ն է:

185. Երեք հաւասար մասն արած դրամագլուխ տարեկան 1140 մանէթ շահ է բերում. առաջին մասը շահեցնելու համար 8 տոկոսով է տրուած, երկրորդը՝ 6-ով, իսկ երրորդը՝ 5-ով: Դրամագլուխը որքա՞ն է:

186. Մի վաճառական երկու գնողի վերայ 11500 մանէթ արժողութեամբ ապրանք ծախեց. առաջին գնողի վերայ ծախած ապրանքից նա 14 տոկոս օգուտ ստացաւ, իսկ երկրորդին ծախածից—16 տոկոս: Վաճառականը բոլոր ապրանքը քանի՞սով ծախեց, եթէ որ երկու գնողից հաւասար գումար ստացաւ:

187. 37000 մանէթի դրամագլուխը երեք մասն է արած. առաջինը շահեցնելու համար 4 տոկոսով է տրուած, երկրորդը 5-ով, իսկ երրորդը՝ 6-ով: Ցարին անցնելուց յետոյ այդ բոլոր մասերից հաւասար շահ ստացուեցաւ: Ամբողջ դրամագլուխը ինչպիսի՞ մասերի էր բաժանած:—

II. ԽՆԴԻՐՆԵՐ ԲԱՐԴ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԹՈՒԵՐՈՎ:

188. Եկեղեցական տուփից բոլոր փողերը հանեցին՝ 185 հատ 1 կոպէկանոց, 67—2 կոպ., 78—3 կոպ., 39—5 կոպ. և միքանի էլ տասնուհինգ կոպէկանոց: Քանի՞ տասնուհինգ կոպէկանոց հանեցին, եթէ որ տուփի մէջ եղած բոլոր փողը 10 մանէթ 33 կոպէկ է:

189. Մի շոգենաւ երկու նաւահանգստի միջի տարածութիւնը 4 ժամում անցաւ. առաջին ժամում գնաց 9 վերստ, 267

սաժ., իսկ մնացած ժամերի իւրաքանչիւրում—12 վերստ, 248 սաժ.: Նաւահանգիստները միմեանցից ինչքա՞ն են հեռու:

190. Մեղուաբոյծը մէկ փեթակից 27 գր. 16 մսխալ մեղր հանեց, միւսից—25 գր. 45 մս., իսկ երրորդից—23 գր. 83 մս., բոլոր մեղըը նա մեղրամանների մէջ դարսեց՝ իւրաքանչիւրում 12 գր. 72 մսխալ: Մեղուաբոյծը մեղրով քանի՞ մեղրաման լցրեց:

191. Մի ջրաղացում երկու տեսակ ցորեն աղացին—ընդամենը 528 չետվերտ. առաջին տեսակ ցորենի չետվերտը 8 փուլ, 14 գըրուանքայ ալիւր տուեց, իսկ երկրորդ տեսակի չետվերտը—7 փուլ, 32 գր.: Ինչքա՞ն ալիւր աղացին, եթէ որ երկրորդ տեսակ ցորենը 176 չետվերտ էր:

192. Յորենը երկու ամբարի մէջ էր ածած. երբոր առաջինի մէջ կրկին 56 չետվերտ, 6 չետվերիկ և 2 գարնեց ցորեն ածեցին, իսկ երկրորդի մէջ—45 չետվերտ, 4 չկ., 3 գարն., այն ժամանակ բոլորի միջի եղածը հաւասար եղաւ, ընդամենը 359 չետվերտ: Առաջ իւրաքանչիւր ամբարի մէջ ինչքա՞ն ցորեն կար:

193. Ներկարարը չորս տախտակէ ցանկ ներկելու համար 2 փեթ. 25 գր. ներկ գործածեց. առաջինին 14 գր. 48 մսխ. գնաց, երկրորդին՝ առաջինից 4 անգամ պակաս, երրորդին՝ երկրորդից՝ 17 անգամ աւելի: Զորրորդ ցանկապատին ինչքա՞ն ներկ գնաց:

194. Գուլպայ գործելու միւլերի համար 4 կապոց պղնձէ թել գնաց. առաջին կապոցի մէջ 10 սաժ. 4 ոտնաչափ և 6 դիւլիմ պղնձէ թել կար, երկրորդումն՝ առաջինից՝ 3 անգամ պակաս, երրորդումն երկրորդից 18 անգամ աւելի, իսկ չորրորդումն՝ երրորդից՝ 34 սաժ., 6 ոտ. 4 դիւլիմ պակաս: Միւլերին ընդամենը ինչքա՞ն պղնձէ թել գնաց:

195. Մի գիւղացի առաջին օրը 560 խուրձ ցորեն կասեց, երկրորդ օրը՝ առաջին օրուանից՝ 180 խուրձ պակաս, իսկ երրորդ օրը՝ երկրորդից՝ 264 խուրձ աւելի: Նա ինչքա՞ն ցորեն ստացաւ, եթէ որ իւրաքանչիւր 36 խուրձը 1 չետվերիկ և 4 գարնեց ցորեն էր տալիս:

196. Մի գիւղացի իւր հնձած երեք օրավար գարին կա-



սեց. կասեղիս իւրաքանչիւր մի չետփերիկ հատիկից 1 փուլթ, 15 գր. յարդ ստացաւ: Գիւղացին ընդամենը ինչքա՞ն յարդ վերցրեց, եթէ որ ամեն մի օրավարը 7 չետփերտ և 6 չետփերիկ հատիկ տուեց:

197. Մի օրավար կտաւահատը 7 չտ. 6 չկ. սերմն է տալիս. 15 գր. սերմից 3 գր. 48 մսխ. ձէթ է ստացուում: 4 օրավար կտաւահատի սերմից ընդամենը ինչքա՞ն ձէթ կ'ստացուի, եթէ որ սերմի չետփերիկը 1 փուլթ և 5 գր. է քաշում:

198. Մի կլայեկող կլայեկեց՝ 17 թաւայ, իւրաքանչիւրը 9 գր. 32 մսխ. և հաւասար ծանրութեամբ էլ 4 կաթսայ. կաթսաները կլայեկելու համար նա թաւանների կլայեկից՝ 16 մանէթ 64 կոպ. աւելի ստացաւ: Իւրաքանչիւր կաթսան ինչքա՞ն էր քաշում, եթէ որ կլայեկողը մէկ գրուանքան կլայեկելու համար 6 կոպ. էր ստանում:

199. Երկու իւղամանով իւղ է առնուել. առաջինում 4 փուլթ, 16 գր. իւղ կար, իսկ երկրորդում—3 փուլթ, 12 գր. առաջին իւղամանի համար՝ երկրորդից՝ 19 մանէթ 80 կոպ. աւելի է վճարուած: Բոլոր իւղին ի՞նչքան են տուել:

200. Ոսկերիչը մի կտոր արծաթից 24 աղաման, 12 դիւժին թէյի և վեց դիւժին սեղանի գդալներ շինեց. իւրաքանչիւր աղամանի համար նա գործածեց՝ 7, իւրաքանչիւր թէյի գդալի համար—6, իսկ իւրաքանչիւր սեղանի գդալի համար—17 մսխալ արծաթ: Արծաթի կտորը որքա՞ն էր քաշում:

201. Մի դերձակի 56 արշ. 4 վերշոկ բրդէ կտոր տուին, արշինը 92 կոպ. և պատուիրեցին երեք միատեսակ շոր կարել: Իւրաքանչիւր շորն ինչքա՞ն նստեց, եթէ որ բոլորի աստառը 7 ման. 35 կոպ. արժէր, իսկ աշխատանքի վարձն էլ 26 ման. 25 կոպ. էր:

202. Ալափը մի կալուածատիրոջից գարի առաւ. առաջին անգամ նա բոլոր գարու եօթներորդ մասը 16 սայլով բերեց, ամէն մէկի վերայ 34 փուլթ, 32 գր., իսկ երկրորդ անգամ—մնացած բոլոր գարին, իւրաքանչիւր սայլի վերայ 38 փուլթ, 16 գրուանքայ: Նա երկրորդ անգամ գարին բանի՞ սայլով բերեց:

203. 68 թուփ մահուդի համար, որի իւրաքանչիւր թուփը 32 արշին էր, 10336 մանէթ է վճարած. բոլոր մահուդը 11315

մանէթ 20 կոպէկով ծախուեց. Ամէն մի արշինից որքա՞ն օգուտ է ստացուել:

204. Աւաճառականը 557 ման. 60 կոպէկի բաւականաչափ սապոն առաւ: Նա բոլոր սապոնը ծախեց՝ փուլթը 4 մանէթ 25 կոպ. և 25 տոկոս օգուտ ստացաւ: Աւաճառականը բանի՞ փուլթ սապոն առաւ:

205. Մի ուսումնարանի գիշերօթիկ աշակերտների համար հաւասար քաշով—6 գլուխ շաքար առան, գրուանքան 16 կոպ. բոլոր շաքարը Սեպտեմբեր, Հոկտեմբեր և Նոյեմբեր ամիսների մէջ գործածեցին, իւրաքանչիւր օր հաւասարաչափ ծախսելով: Ամէն մի գլուխ շաքարը ինչքա՞ն էր քաշում, եթէ որ Սեպտեմբերին 7 մանէթ 20 կոպէկի շաքար գնաց:

206. Մի երկրագործ երկու ալափի վերայ ցորեն ծախեց. առաջինին տուեց 131 չտ. 5 չկ. 6 գարն., երկրորդին՝ առաջինից՝ 6 անգամ պակաս, իսկ մնացածը տան գործածութեան համար թողեց: Տան համար երկրագործը ինչքա՞ն ցորեն թողեց, եթէ որ ծախածը բոլոր ունեցած ցորենի չորրորդ մասն էր կազմում:

207. 75 փուլթ գարու յարդը սննդարարութեան կողմանէ 45 փուլթ, 30 գր. չոր խոտին է փոխարինում: Ի՞նչքան չոր խոտ է հարկաւոր, որ 225 փուլթ գարու յարդին փոխարինէ:

208. 10 գրուանքայ ցորենի ալիւրը 13 գր. 48 մսխ. հաց է տալիս: Ինչքա՞ն ցորենի ալիւր է հարկաւոր ունենալ, որ 5 փուլթ, 16 գր. հաց թխուի:

209. 7500 մանէթի դրամագլուխը 2 տարում և մի ամսում 625 մանէթ շահ բերեց: Իւրաքանչիւր տարի նա ինչքա՞ն տոկոս էր բերում:

210. 16 գր. հում սուրճից 13 գր. բոված սուրճ է ստացուում: Ինչքա՞ն հում սուրճ է հարկաւոր ունենալ, որ 3 փուլթ 36 գր. բոված սուրճ ստացուի:

211. Սայլի առաջին ակը, որի շրջապատը 1 սաժ. 2 ոտ. 4 դիւլիմ է, 2475 անգամ պտոյտ եկաւ: Յետեւի ակը, որի շրջապատը առաջին ական շրջապատից 5 ոտ. 8 դիւլիմ աւելի է, բանի՞ պտոյտ արաւ:

212. Երկու կճուճի մէջ հաւասարաչափ իւղ կար. երբոր

առաջինից բոլոր իւրի տասնուչորսերորդ մասը վերցրին և էլի 2 փուլ, 37 գր. 64 մսխ., այն ժամանակ առաջինի մէջ՝ երկրորդից՝ 3 փուլ, 13 գր. 72 մսխալ պակաս իւղ մնաց: Իւրաքանչիւր կճուճի մէջ ինչքա՞ն իւղ կար:

213. Մի կտոր երկաթից, որը 20 փուլ, 16 գր. է քաշում, դարբինը գուժանի ձևիչներ շինեց, ամեն մէկը 21 գր. ծանրութեամբ: Քանի՞ ձևիչ դուրս եկաւ, եթէ որ երկաթի կտորը ծեծուելուց իւր քաշի ուժերորդ մասը կորցրեց:

214. 17 ձիուն և 38 կովին 748 փուլ, 20 գր. յարգը քանի՞ օր կ'բաւականանայ, եթէ որ իւրաքանչիւր ձիուն օրական 7, իսկ իւրաքանչիւր կովին 10 գրուանքայ յարգ տան:

215. Երկու գիւղացի իւրեանց բանջարանոցներից լոբի քաղեցին. առաջինը իւր հաւաքածի տասնուհինգերորդ մասը ծախեց, իսկ երկրորդը — երեսուներեւթներորդ մասը. նոցա բոլոր ծախածը 8 չտ. 5 չկ. 3 գարն. էր: Երկրորդ գիւղացին ինչքա՞ն լոբի քաղեց, եթէ որ առաջինի քաղածը 79 չտ. 5 չկ. 4 գարն. էր:

216. Մսավաճառը 140 գլուխ խոզ և 220 գլուխ ոչխար առաւ. խոզի հատը իւրաքանչիւր ոչխարից 2 ման. 65 կոպէկով թանգ էր: Իւրաքանչիւր տեսակի հատը ի՞նչ գնով առաւ, եթէ որ բոլորի համար 1667 մանէթ է վճարած:

217. Մի գունդ զինուորներին 45 օրում 376 փուլ, 35 գր. ալիւր գնաց: Այդ գնդի մէջ քանի՞ զինուոր կար, եթէ որ իւրաքանչիւր զինուորին օրական 2 գր. 48 մսխ. ալիւր էր գնում:

218. 95 արշ. 8 վերշոկ ատլասի թուրը 305 մանէթ 60 կոպ. արժէ: Այդ թուրի 37 արշ. և 8 վերշոկը ի՞նչքան կարժենայ.

219. Փոստային իջւանի կառավարիչը 39 ձի ունէր. իւրաքանչիւր ձիուն նա օրական 16 գր. չոր խոտ և չորս գարնեց գարի էր տալիս: Կառավարիչը բոլոր ձիերի կերակրի համար 17 շաբաթուայ մէջ ինչքա՞ն փող մսխեց, եթէ որ խոտի փթին 30 կոպ. վճարեց, իսկ գարու չեփերտին — 4 մանէթ 64 կոպ.:

220. Մի գիւղացի 18 օրավար ցորեն հնձեց. իւրաքանչիւր օրավարը 5 չեփերտ հատիկ տուեց. 16 չեփերտը նա սերմի համար թողեց, իսկ մնացածը ալիւր աղաց: Ինչքա՞ն ալ-

իւր դուրս եկաւ, եթէ որ հատիկի իւրաքանչիւր չեփերտիկը աղալիս 32 գր. ալիւր էր տալիս:

221. 3 փուլ, 20 գր. շաքարի, 15 գր. թէյի և 12 գր. սուրճի համար 53 ման. 40 կոպ. է վճարած. սուրճը շաքարից երեք անգամ, թէյն էլ սուրճից 4 անգամ թանգ է: Շաքարը, թէյը և սուրճը ի՞նչ գնով են առնուած:

222. Մի վաճառական 3 հակն ապրանքի համար 240 մանէթ 48 կոպ. վճարեց. առաջին հակն մէջ 8 փուլ, 30 գր. ապրանք կար, երկրորդում — 7 փուլ, 32 գր., իսկ երրորդում — 8 փուլ, 20 գր., առաջին հակն գրուանքան նա ծախեց՝ 26 կոպէկով, երկրորդինը — 28-ով, իսկ երրորդինը 30-ով: Վաճառականը բոլոր ապրանքը ծախելուց ի՞նչքան օգուտ ստացաւ:

223. Վաճառականը 110 մանէթի, 60 կոպ. 16 փուլ շաքար և 15 գրուանքայ թէյ ծախեց. թէյի գրուանքան շաքարի փթից չորս անգամ արժան է: Շաքարի գրուանքան ի՞նչ գնով է ծախուած:

224. Փուլը 4 մանէթ, 80 կոպէկանոց շաքարաւաղը երեք արկղի մէջ է ածած. երկրորդում՝ առաջինից՝ 16 գրուանքայ աւելի է, իսկ երրորդում՝ առաջին երկուսից՝ չորս անգամ պակաս: Այդ արկղների մէջ ընդամենը ինչքա՞ն շաքարաւաղ կայ, եթէ որ առաջինի մէջ եղածը 14 մանէթի և 16 կոպէկի է:

225. Երեք ատաղձագործ 85 մանէթ 50 կոպ. աշխատեցին. այդ փողի վեցերորդ մասը նոքա կերակրի համար վճարեցին, իսկ մնացածը, աշխատանքի օրերի թուին համեմատ, միմեանց մէջ բաժանեցին: Իւրաքանչիւր ատաղձագործ ինչքա՞ն պէտք է ստանար, եթէ որ առաջինը՝ 24, երկրորդը — 18, իսկ երրորդը — 15 օր աշխատեց:

226. Երեք խումբ մշակներ 487 ման. 20 կոպ. աշխատանքի վարձ ստացան. առաջին խումբը բաղկացած էր՝ 18, երկրորդը 20 իսկ երրորդը — 12 հոգուց: Իւրաքանչիւր խումբ ինչքա՞ն ստացաւ, եթէ որ առաջինը՝ 14, երկրորդը — 16, իսկ երրորդը — 20 օր աշխատեց:

227. Պղնձից, ցինկից և անագից կաղմուած 3 փուլ, 12 գր. 26 մսխ. քաշ ունեցող մի կտոր խառնուրդ կայ. պղնձի իւրաքանչիւր 7 մասին՝ 4 մասը ցինկ և 3 մասն անագ է գալիս:

Այդ խառնուրդ կտորի մէջ ինչքա՞ն պղինձ, ցինկ և անագ կայ:

**228.** 25 փուլ և 14 գր. քաշ ունեցող երեք կտոր երկաթ կայ, որոնք միակերպ հաստութիւն և լայնութիւն, միայն զանազան երկարութիւն ունին. երկրորդ կտորը առաջինից՝ երկու, իսկ երրորդը երկրորդից՝ երեք անգամ ծանր է: Այդ կտորներից իւրաքանչիւրը ի՞նչ երկարութիւն ունի, եթէ որ միւսնոյն հաստութիւն և լայնութիւն, միայն թէ մէկ ոտնաչափ երկարութիւն ունեցող երկաթի կտորի ծանրութիւնը 28 գր. և 16 մսխալ լինի:

**229.** Երկու վաճառական միմեանց մէջ ապրանքներ փոխեցին. առաջինը երկրորդին 17 փուլ, 24 գր. շաքար տուեց, փուլը 6 ման. 50 կոպ., որի փոխարէն միւսից մի քանի թոփ քաթան ստացաւ, իւրաքանչիւրը 23 արշ. 4 վերջոկ երկարութեամբ, արշինն էլ 1 մանէթ 36 կոպ. արժողութեամբ: Առաջին վաճառականը քանի՞ թոփ քաթան ստացաւ, եթէ որ երկրորդը նորան 19 ման. 54 կոպ. ևս պէտք է վճարէր:

**230.** Մի դերձակ 315 արշին դրափ ունէր, որը իւր ունեցած մահուդից, քանակութեամբ, 3 անգամ աւելի էր. բոլոր մահուդը նա հաւասար կերպով 21 սերթուկի համար գործ դրեց, իսկ բոլոր դրափից էլ մի քանի վերարկուներ կարեց: Գերձակը քանի՞ վերարկու կարեց, եթէ որ իւրաքանչիւրին՝ ամէն մի սերթուկի համար գործ դրած մահուդից՝ 1 արշ. 8 վերջոկ աւելի գնաց:

**231.** Մէկ կապալառու յանձն առաւ մի խճեայ ճանապարհ ուղղել. առաջին շաքաթ նա բոլոր ճանապարհի տասնուչորսերորդ մասը ուղղեց, երկրորդ շաքաթ մնացած տարածութեան տասնուերկուերորդ մասը, իսկ հետևեալ ամէն մի շաքաթ—2 վերստ, 21 սաժ. 3 ոտ, տարածութիւն: Խճեայ ճանապարհը ի՞նչ երկարութիւն ունէր, և թէ կապալառուն քանի՞ շաքաթուայ մէջ իւր կապալը վերջացրեց, եթէ որ առաջին շաքաթ ճանապարհը 428 սաժ., 4 ոտնաչափ տարածութեամբ էր ուղղած:

**232.** Երեք ասղնագործ բանուածներ պատրաստող կանայք յանձն առան 363 արշ. բանուածք գործել. նոցանից առաջինը գործում է՝ 27 օրում 60 արշ. 12 վերջ., երկրորդը՝ 26 օրում—66 արշ. 10 վերջոկ, իսկ երրորդը՝ 36 օրում—99 արշ.: Ասղնա-

գործ կանայք քանի՞ օրում կ'վերջացնեն պատուէրը, եթէ որ ամբողջ ժամանակ միասին աշխատեն:

**233.** Կազմարարը 112 օգմայ, 10 դաստայ և 18 թերթ գունաւոր թուղթ ունէր. այդ թղթի վեցերորդ մասը նա բանեցրեց Մայիս ամսին, մնացորդի հինգերորդ մասը՝ Յունիսին, իսկ մնացած թուղթը հետևեալ չորս ամսում գործածեց, իւրաքանչիւր ամսին հաւասար քանակութեամբ: Վեցերորդ ամսում կազմարարին ինչքա՞ն գունաւոր թուղթ գնաց:

**234.** 27 մշակ 5 օրում 337 չտ. 4 չկ. ցանելու կարտոֆիլ կտրատեցին: 17 մշակը երեք օրում ինչքա՞ն կարտոֆիլ կ'կտրատեն:

**235.** Մի գունդ զինուորների համար հաց էր պատրաստած, որը 40 օր բաւական կ'լինի, եթէ օրական իւրաքանչիւր մարդուն մէկ գր. 48 մսխ. հաց տան: Այդ միւսնոյն պաշարը քանի՞ օր կ'բաւականանայ, եթէ որ օրական իւրաքանչիւր մարդուն 2 գր. հաց տրուի:

**236.** Չիթահանքում 357 չետվերտ կտաւահատից ձէթ հանեցին և իւրաքանչիւր մի փուլ սերմից 8 գր. 32 մսխ. ձէթ ստացան: Ընդամենը ինչքա՞ն ձէթ ստացան, եթէ որ մէկ չետվերիկ կտաւահատի սերմը 1 փուլ, 8 գրուանքայ է քաշում:

**238.** Մի գիւղացի մի քանի օրավար հաճար ունէր. իւրաքանչիւր օրավար 4 չտ. 6 չկ. հատիկ էր տալիս, իսկ ամէն մի չետվերիկն էլ 33 գրուանքայ էր քաշում. բոլոր հաճարը, բնահան անելով, աղալ տուեց և 85 փուլ, 32 գրուանքայ ալիւր ստացաւ: Գիւղացին քանի՞ օրավար հաճար ունէր, եթէ որ 19 գր. հատիկից 13 գր. ալիւր ստացաւ:

**238.** 165 կարժ թելից քաթան գործեցին. իւրաքանչիւր կարժը 4 արշ. 12 վերջոկ էր. 473 արշ. 4 վերջ. քաթանը պարկերի համար գործածեցին, իսկ մնացածներից՝ շորեր կարեցին: Քանի՞ շոր դուրս եկաւ, եթէ որ ամէն մէկին 17 արշ. 4 վերջոկ քաթան էր գնում:

**239.** Մի գործարան 3 տակառ ճարպ բերին, փուլը 2 ման. 72 կոպէկով. առաջին տակառում 6 փուլ, 35 գր. ճարպ կար, իսկ երկրորդում՝ 2 փուլ, 20 գր. աւելի: Բոլոր ճարպը ինչքա՞ն էր քաշում, եթէ որ երրորդ տակառի ճարպը՝ առաջին

երկուսուսն եղած ճարպից՝ 23 ման. 80 կոպ. պակաս արժէր:

**240.** Մի վաճառական իւր ունեցած պարանքի գրուանքան 1 ման. 44 կոպ. ծախելով՝ 20 տոկոս օգուտ է ստանում: Ինչքան տոկոս օգուտ կ'ստանար, եթէ որ իւր պարանքի գրուանքան 1 մանէթ 50 կոպէկով ծախէր:

**241.** Մի կապալառու երեք վաճառականի վերայ միատեսակ գնով իւր ծախեց. առաջինին 19 փուլթ, 16 գր. տուեց, երկրորդին՝ 28 փուլթ, 20 գր., իսկ երրորդին—26 փուլթ, 18 գր.: Կապալառուն բոլոր իւրի համար ինչքան փող ստացաւ, եթէ որ առաջին վաճառականը 217 մանէթ և 28 կոպէկ վճարեց:

**242.** 28 մշակ 18 օրում 327 փուլթ, 24 գր. կտաւահատ են ծեծում: 982 փուլթ, 32 գր. կտաւահատը 39 մշակը քանի՞ օրում կ'ծեծեն:

**243.** Մի ջրաղաց, օր ու գիշեր 20 ժամ բանելով, 8 օրում կարող է 2800 փուլթ ալիւր աղալ: Նա 5 օրում ինչքան ալիւր կ'աղայ, եթէ որ նոյնպէս օր ու գիշեր 16 ժամ և 12 ըոպէ բանի:

**244.** Երկու խումբ մշակներին աշխատանքի վարձ վճարած է 1575 ման. առաջին խումբը 30 մարդ էր, օրական 10 ժամ բանելով, 48 օր աշխատեց, իսկ երկրորդը՝ 24 մարդ, օրական 12 ժամ, 30 ըոպէ աշխատելով, 15 օր բանեց: Իւրաքանչիւր խումբ ինչքան ստացաւ:

**245.** Երկու խումբ ոստայնանկներ գետնագործ շալ գործեցին. մէկ խումբը պատրաստեց 120 թոփ, իւրաքանչիւրը 40 արշին երկարութեամբ, իսկ միւսը՝ 180 թոփ—32 արշ. երկարութեամբ: Բոլոր շալը 792 մանէթով ծախուեցաւ: Ոստայնանկների իւրաքանչիւր խումբը ինչքան փող պէտքէ ստանայ:

**246.** Մի վաճառական առաւ՝ 8 փուլթ, 16 գր. թէյ, գրուանքան 1 ման. 15 կոպէկով. 12 փուլթ, 25 գր. սուրճ, գրուանքան 32 կոպ. արժողութեամբ, և շաքար—գրուանքան 15 կոպէկով: Վաճառականը ինչքան շաքար առաւ, եթէ որ նա բոլոր առնուածի համար 823 մանէթ և 25 կոպ. մսխեց:

**247.** 8 դարբին 27 օրում մեխեր պատրաստեցին, իւրաքանչիւր դարբին օրական 6 գր. 24 մսխ. մեխ էր շինում: Բո-

լոր դարբինները ինչքան մեխ պատրաստեցին, եթէ որ 80 մեխը 4 գրուանքայ է քաշում:

**248.** 18 ճախարակով 5 օրում 14 փուլթ, 10 գր. կծիկ մանուածք են պատրաստում, օրական 12 ժամ բանելով: Այդ բոլոր ճախարակներով 15 օրում ինչքան մանուածք կ'պատրաստեն, եթէ որ օրական 16 ժամ աշխատեն:

**249.** Գիւղացին երկու շրջավաճառի վերայ ընկոյղ ծախեց. առաջինին՝ երկրորդին՝ 2 անգամ աւելի տուեց և ընդամենը 6 մանէթ 30 կոպ. օգուտ ստացաւ: Նա իւրաքանչիւր շրջավաճառին ինչքան ընկոյղ ծախեց, եթէ որ ինքն՝ ուրիշից առնելով՝ 1 փուլթ, 25 գր. ընկոյղին 1 մանէթ 95 կոպ. վճարեց, իսկ ծախեց՝ 1 փուլթ, 17 գրուանքան 2 մանէթ 85 կոպէկով:

**250.** Մի գործարանի մէջ Սեպտեմբեր ամսին վառուեց 26 օրում 127 խողովակների մէջ՝ 296 մանէթի և 24 կոպէկի, իսկ Հոկտեմբեր ամսին 24 օրում՝ 138 խողովակներում՝ 463 մանէթի և 68 կոպէկի գաղ: Հոկտեմբեր ամսին իւրաքանչիւր խողովակում գաղը օրական քանի՞ ժամ էր վառուում, եթէ որ Սեպտեմբերին իւրաքանչիւր խողովակի մէջ օրական 6 ժամ վառուեց:

**251.** Մէկ կապալառու յանձն առաւ մի ճանապարհ քարել, որի երկարութիւնը 2 վերստ, 464 սաժ. էր. առաջին անգամ նա 27 մշակ բանեցրեց, իսկ 14 օրից յետոյ մի քանի մշակ ևս աւելացրեց: Երկրորդ անգամ կապալառուն քանի՞ մշակ բերեց, եթէ որ բոլոր ճանապարհը 21 օրում վերջացրին, որի ժամանակ իւրաքանչիւր մշակ օրական 1 սաժ. 5 ոտնաչափ տարածութեամբ տեղ բարեց:

**252.** Մէկ վաճառական սուրճ ստացաւ. բոլոր սուրճը նա բովեց և մէկ գրուանքայ հում սուրճից միայն 75 մսխալ բոված սուրճ դուրս եկաւ: Բոլոր բոված սուրճը ծախելով, գրուանքան 68 կոպէկով, վաճառականը 102 ման. փող ստացաւ: Հում սուրճի գրուանքան նորան ինչքան նստեց, եթէ որ բոլոր բոված սուրճի ծախելուց 15 մանէթ 60 կոպ. օգուտ ունեցաւ:

**253.** Մի հովիւ իւր բոլոր ոչխարները խուղեց. 116 ոչխարների ամէն մէկից 3 գր. 24 մսխ. բուրդ ստացաւ. իսկ մնացած իւրաքանչիւրից—3 գր. 48 մսխ.: Նա բոլոր բուրդը լուաց

և 182 ման. 40 կոպէկով ծախեց, փուլթը 9 ման. 60 կոպ. :  
Հօտի մէջ քանի՞ ոչխար կար, եթէ որ բուրդը՝ լուացուելուց՝ իւր  
քաշի երրորդ մասը կորցրեց:

254. Մի գործարանում 24 օրուայ մէջ կանայք և տղա-  
մարդիկ էին բանում. տղամարդիկ կանանցից երկու անգամ  
աւելի էին. բոլորի ստացած վարձն էլ 1285 մանէթ 20 կոպ. էր:  
Գործարանի մէջ քանի՞ տղամարդ էր բանում, եթէ որ 12 տղա-  
մարդը 13 օրուայ աշխատանքի համար այնքան փող էին վերց-  
նում, ինչքան որ 15 կանայք 20 օրուայ համար, մանաւանդ որ  
իւրաքանչիւր կին էլ օրական 65 կոպ. վարձ էր ստանում:

255. Մէկ կազմարար 120 գիրք յանձն է առնում կազմել՝  
40, միւսը՝ 30, իսկ երրորդը՝ 24 օրում: Նոքա բոլոր գրքերը  
քանի՞ օրում կ'կազմեն, եթէ որ երեքը միաժամանակ աշխատեն,  
և իւրաքանչիւրն էլ իւր աշխատանքի համար ինչքան կ'ստանայ,  
եթէ որ բոլոր գրքերի համար նոցա 72 մանէթ է վճարած:

256. 19152 դոլլ ջուր պարունակող ջրամբարը երեք  
խողովակ է տարած. առաջինը նորան կըլցնէ 45 ժամ — 36 րո-  
պէում, իսկ երկրորդը՝ 35 ժամ, 28 րոպէում. եթէ միանգամից  
բոլոր երեք խողովակը բացանեն, այն ժամանակ ջրամբարը 11  
ժամ և 24 րոպէում կ'լցուի: Երրորդ խողովակը ինչքան ժամա-  
նակում կ'լցնէ ջրամբարը:

257. 3 փուլթ, 16 գր. ալիւրը, որի գրուանքան 8 կոպէկ  
է, մի ուրիշ տեսակ 4 փուլթ և 24 գրուանքայ ալիւրի հետ է  
խառնած. բոլոր խառնած ալիւրը — գրուանքան 9 կոպէկով  
ծախել են և 6 մանէթ 88 կոպէկ օգուտ ստացել: Երկրորդ  
տեսակ ալիւրը ի՞նչ գնի է:

258. Վաճառականը՝ գրուանքան մէկ ման. 75 կոպէկա-  
նոց՝ 5 փուլթ, 16 գր. թէյը մի ուրիշ տեսակ 4 փուլթ, 25 գր.  
թէյի հետ խառնեց. նա բոլոր խառնուրդ թէյը — գրուանքան 2  
մանէթ, 20 կոպէկով ծախեց և 106 մանէթ, 45 կոպ. օգուտ  
ստացաւ: Երկրորդ տեսակ թէյը գրուանքան վաճառականին  
ինչքան էր նստել:

259. Երեք տեսակ թէյ են խառնել. մէկի գրուանքան 1  
մանէթ, 80 կոպ. է, միւսինը՝ 1 մանէթ, 45 կոպ., իսկ երրոր-  
դինը — 1 մանէթ, 35 կոպ. : առաջին տեսակից 76 գր. 48 մսխ.

են վեր առել, երկրորդից — 94 գր. : Երրորդ տեսակից ինչքան  
թէյ է վերցրած, եթէ որ բոլոր խառնուրդը 382 մանէթ արժէ:

260. Մի գիւղացի մտացուի համար 639 մանէթ, 45 կոպէ-  
կով առաջ ծախեց — 56 գլուխ խոզ և 97 գլուխ ոչխար. յետոյ  
միւսնոյն գնով, միայն 554 մանէթ, 75 կոպէկով դարձեալ ծա-  
խեց — 56 գլուխ խոզ և 75 հատ ոչխար: Նա իւրաքանչիւր տե-  
սակ կենդանիների հատը ի՞նչ գնով ծախեց:

261. Վաճառականը 3 հակն ապրանք ուղարկեց. առաջի-  
նը և երկրորդը միասին քաշում էին՝ 29 փուլթ, 26 գրուանքայ.  
առաջինը և երրորդը — 30 փուլթ, 35 գր., իսկ երկրորդը և եր-  
րորդը — 35 փուլթ, 5 գր. : Իւրաքանչիւր հակն ուղարկելը վաճա-  
ռականին ինչքան նստեց, եթէ որ ամէն մի փթի տանելու  
վարձ 24 կոպ. տուեց:

262. Երեք գրագիր 168 թերթ ձեռագիր արտագրեցին.  
առաջինը՝ երկրորդից, իսկ երկրորդը — երրորդից՝ երկ — երկու  
անգամ աւելի արտագրեցին: Իւրաքանչիւրը, իբրև աշխատանքի  
վարձ, ինչքան պետք է ստանայ, եթէ որ նոքա մէկ թերթ ձեռագ-  
րից 60 կոպ. էին ստանում:

263. Երկու վաճառական ընկերութեամբ փայտ առան.  
մէկը 19000 ման. տուեց, իսկ միւսը — 16625 մանէթ: Երբոր  
նոքա այդ փայտը ծախեցին և իւրեանց վերեկած փողի համե-  
մատ ստացած օգուտը բաժանեցին, այն ժամանակ առաջինը  
երկրորդից 476 ման. 18 կոպ. աւելի օգուտ ստացաւ: Երկրորդը  
որքան օգուտ ստացաւ:

264. Երեք գիւղացի՝ իւրեանց 75 կովն ամառը արածեց-  
նելու համար՝ կապալով մի սար վերցրին այն պայմանով, որ  
կապալի փողը կովագլխի հաշուով վճարեն. երկրորդը առաջինից  
14 կով, իսկ երրորդն երկրորդից 8 կով աւելի ունէր: Գիւղա-  
ցիք սարն ի՞նչպէս վերցրին, եթէ որ առաջինը իւր բաժինը 19  
մանէթ, 24 կոպէկ վճարեց:

265. Մի վաճառական միատեսակ գնով երեք արկղ 8200  
հատ նարինջ գնեց. առաջին արկղում՝ երկրորդից՝ 680 նա-  
րինջ, իսկ երկրորդում երրորդից՝ 190 նարինջ աւելի էր: Վաճա-  
ռականին իւրաքանչիւր արկղը ի՞նչ նստեց, եթէ որ առաջին արկղի  
նարինջների համար նա երկրորդից 27 ման. 20 կոպ. աւելի վճարեց:

**266.** Երեք եղբայր, իւրեանց հօր կտակի համեմատ, միմեանց մէջ 16227 մանէթն այսպէս բաժանեցին. մեծ եղբօր ստացած իւրաքանչիւր 24 մանէթի փոխարէն միջնակը միայն 18 ման. ստացաւ, իսկ կրտսերը—12: Բաժանուելուց յետոյ մեծ եղբայրը իւր մասը փոքր եղբայրներին ընծայեց, որոնք ընծայած փողը միմեանց մէջ բաժանեցին այն փողի համեմատ, որը ժառանգութիւն էին ստացել: Փոքր եղբայրներից իւրաքանչիւրը ընդամենը ինչքա՞ն փող ստացաւ:

**267.** Կարմիր ներկ պատրաստելու համար հարկաւոր է լինում վերցնել 2 մասը սնդիկ և 15 մասը ծծումբ: Ի՞նչքան սնդիկ և ինչքա՞ն ծծումբ է հարկաւոր վերցնել, որ երկու փուլով 24 գրուանքայ և 12 մսխ. ներկ շինեն:

**268.** 38 արշ. 8 վերշ. բրդէ շորի համար մի վաճառական իւր ընկերին առաջարկեց տալու՝ կամ մի թոփ մահուդ 17 արշինանոց, կամ մի ուրիշ թոփ՝ նոյն մահուդից՝ 35 արշինանոց. առաջին դէպքում վաճառականը, բացի մահուդից, պէտքէ 6 ման. 57 կոպ. ևս վճարէր, իսկ երկրորդ դէպքում ինքը 32 ման. 13 կոպ. պէտք է ստանար: Բրդէ շորի արշինը ի՞նչքան արժէր:

**269.** Առաւօտեան 8 ժամ—30 րոպէին մի քաղաքից մէկ ճանապարհորդ դուրս եկաւ, որը իւրաքանչիւր ժամին 8 վերստ էր գնում. միևնոյն օրուայ առաւօտեան 11 ժամին նորանից յետոյ մի ուրիշ ճանապարհորդ դուրս եկաւ և երեկոյեան 9 ժամին առաջինին հասաւ: Երկրորդ ճանապարհորդը ժամը քանի՞ վերստ էր գնում:

**270.** Երկու շոգենաւ միաժամանակ երկու քաղաքից միմեանց հանդէպ դուրս եկան և 36 ժամից յետոյ պատահեցան: Առաջին շոգենաւը՝ երկրորդից մի ժամում 3 վերստ 250 սաժ. աւելի էր գնում: Նորա պատահելուց յետոյ քանի՞ ժամում կ'հասնեն իւրեանց տեղերը, եթէ որ այդ քաղաքների միջի տարածութիւնը 882 վերստ է:

**271.** Մի կօշկարար մէկ ուսումնարանի աշակերտների համար պարտաւորուեցաւ կօշիկներ տալ՝ զոյգը 5 ման. 20 կոպ., նա իւր արհեստանոցում 275 զոյգ կօշիկ կարեց, որի իւրաքանչիւր զոյգն երան 4 մանէթ, 25 կոպ. նստեց, իսկ մնացածները նա ուրիշ կօշկարարի տուեց կարելու, զոյգը 5 ման. 35 կոպ.:

Կօշկարարը քանի՞ զոյգ պէտքէ տար ուսումնարանին, եթէ որ այդ բոլոր կապալից ինքը 253 ման. օգուտ ունեցաւ:

**272.** Երկու շոգենաւ միաժամանակ երկու նաւահանգստից միմեանց հանդէպ դուրս եկան. մէկ շոգենաւը մի րոպէում 135 սաժ. 4 ոտն. էր գնում, իսկ միւսը—128 սաժ. 6 ոտն.: Այդ շոգենաւերը որքա՞ն ժամանակից յետոյ պատահեցան, եթէ որ նաւահանգիստների միջի տարածութիւնը 44 վերստ և 212 սաժէն է:

**273.** Մի ոսկերիչ 5 գր. 29 մսխ. ոսկին շղթաների և ապարանջանների համար գործ դրեց. իւրաքանչիւր շղթային 27 մսխ. ոսկի գնաց, իսկ իւրաքանչիւր ապարանջանին—13 մսխալ: Ոսկերիչը քանի՞ շղթայ և քանի՞ ապարանջան շինեց, եթէ որ շղթաներին բոլոր ապարանջաններից՝ 3 գր. 13 մսխ. աւելի գնաց:

**274.** Վաճառականը գործարանից 240 փուլ շաքար ստացաւ, որի համար 1368 մանէթ վճարեց. բերած շաքարի քսաներորդ մասը փչացաւ և չ'ծախուեց: Նա մնացած շաքարը ի՞նչ գնով պէտքէ ծախէ, որ մնած փողի փոխարէն 29 տոկոս օգուտ ստանայ:

**275.** Մի մանրավաճառ իւղի փուլը 10 մանէթով առաւ. 2 փուլով, 16 գր. իւղը փչացաւ և չ'ծախուեց, իսկ մնացած իւղի գրուանքան 30 կոպէկով վաճառեց: Նա ինչքա՞ն իւղ գնեց, եթէ որ միայն մէկ մանէթ, 60 կոպ. օգուտ ստացաւ:

**276.** Երկու փականագործ իրանց աշխատանքի համար 176 մանէթ, 40 կոպ. ստացան. երբոր առաջինը իւր ստացած փողերից երկրորդին իւր պարտքի տեղ 12 մանէթ, 75 կոպ. տուեց, այն ժամանակ երկրորդը՝ առաջինից՝ 13 անգամ աւելի փող ունեցաւ: Իւրաքանչիւր փականագործ որքա՞ն փող ստացաւ:

**277.** Ցանտերը մի հիւսն վարձեց օրական 1 մանէթ, 45 կոպ., միայն այն պայմանով, որ նորա վարձից ամէն մի չ'բանած օրուայ համար 80 կոպ. հանէ. 25 օրից յետոյ հիւսնը իւր տեղից դուրս գնաց և միայն 20 ման. 50 կոպ. փող ստացաւ: Նա քանի՞ օր աշխատեց:

**278.** Գործարանատէրը 17 հայելու մեծ ապակիներ կրելու համար մի սայլ վարձեց, միայն այն պայմանով, որ ամէն մի ամբողջութեամբ հասցրած ապակու համար 2 մանէթ, 85 կոպ.

վճարէ, իսկ իւրաքանչիւր կոտրած ապակու համար սայլապանից 7 մանէթ, 60 կոպ. հանէ, չ'հատուցանելով և՛ կոտրածների հասցնելու վճարը: Որովհետև սայլապանը ամբողջութեամբ բոլոր ապակիները չ'հասցրեց, այդ պատճառով նա միայն 27 մանէթ, 55 կոպ. ստացաւ: Սայլապանը ամբողջութեամբ քանի՞ հայելու ապակի հասցրեց:

279. Մտաւաճառը 1864 մանէթի 400 գլուխ խոզ և ոչխար առաւ. խոզի հատը 6 մանէթ, 25 կոպ. է, իսկ ոչխարինը — 3 մանէթ, 60 կոպ.: Քանի՞ խոզ և քանի՞ ոչխար է առնուած:

280. Վաճառականը 3936 մանէթի և 72 կոպ. կերպաս և թաւիչ գնեց, ընդամենը 216 արշին. կերպասի համար նա արշինին 7 մանէթ, 36 կոպ. վճարեց, իսկ թաւիչի համար — արշինին 25 մանէթ, 84 կոպ.: Վաճառականը ինչքան կերպաս և ինչքան թաւիչ գնեց:

281. Ալափը երկու տեսակ ալիւրից 22 փութ, 13 գր. խառնուրդ կազմեց. մէկ տեսակի գրուանքան 6 կոպ. էր, իսկ միւսինը — 4. բոլոր խառնուրդ ալիւրը նա ծախեց՝ գրուանքան 7 կոպէկով և 19 մանէթ, 45 կոպ. օգուտ ստացաւ: Խառնուրդի համար իւրաքանչիւր տեսակից ինչքան ալիւր գնաց:

282. Մի կալուածատէր իւր գիւղից սայլը քաղաք ուղարկեց, իսկ 9 ժամից յետոյ էլ ինքը միւսնոյն ճանապարհով գնաց և, մի ժամում սայլից 6 վերստ, 375 սաժ. աւելի ճանապարհ կտրելով, նորան 6 ժամից յետոյ քաղաքից 32 վերստ, 250 սաժ. հեռաւորութեան վերայ հասաւ: Գիւղի և քաղաքի միջև տարածութիւնը ինչքան է:

283. Մի գիւղացի 24 մանէթի և 88 կոպէկի 2 փութ, 36 գր. մոր և 3 փութ, 17 գր. կեռաս ծախեց: Նա ինչքան փող ստացաւ մորի և ինչքան կեռասի համար, եթէ որ մորի գրուանքան կեռասի գրուանքայից 4 կոպ. թանգ էր:

284. Երկու վաճառական մի գործարանատիրոջից թել առան՝ մէկը 27 մանէթ և 33 կոպէկի — 375 կարժ սև և 286 կարժ սպիտակ, իսկ միւսը — 349 կարժ սև և 257 կարժ սպիտակ թել: Երկրորդ վաճառականը բոլոր թելերի համար ինչքան վճարեց եթէ որ գործարանատէրը մի կարժ սև և մի կարժ սպիտակ թելի համար 8 կոպէկ վերցրեց:

285. Պատտաւագործը 7 դիւթին աթոռ և 15 հատ գահաւորակ պատտաւելու համար՝ արշինը մէկ մանէթ և 36 կոպէկանոց՝ 195 արշ. 12 վերշ. պատտաւ գործածեց: Բոլոր աթոռներին զնացած պատտաւը ինչքան արժէ, եթէ որ մէկ աթոռ և մէկ գահաւորակ պատտաւելու համար 7 արշ. 14 վերշ. պատտաւ գնաց:

286. Ուսուսնարանի բոլոր աշակերտները համաձայնեցան պատկերները խմբովին հանել տալ. եթէ իւրաքանչիւր աշակերտ 1 մանէթ, 30 կոպ. տար, այն ժամանակ ամբողջ խմբի նկարելու վարձը վճարելու համար 14 մանէթ, 40 կոպ. կ'պակասէր. իսկ եթէ իւրաքանչիւր աշակերտ 2 մանէթ տար, այն ժամանակ հաւաքած փողից շրջանակների համար 8 մանէթ կ'աւելանար: Ուսուսնարանումը քանի՞ աշակերտ կար:

287. Վաճառականը իրար հետ 3 տեսակ սուրճ խառնեց — առաջինը՝ գրուանքան 35, երկրորդը՝ 45 և երրորդը՝ 60 կոպէկանոց, առաջին տեսակից նա վերցրեց 7, երկրորդից — 5, իսկ երրորդից էլ 3 փութ. բոլոր խառնած սուրճը նա միատեսակ գնով ծախեց, որից և 20 տոկոս օգուտ ստացաւ. Վաճառականը խառնուրդ սուրճի փութը ի՞նչ գնով ծախեց:

288. Արձիճից և անագից ձուլած կտորը 16 գր. 24 մսի. է բաշում. արձիճի քաշը անագի քաշի 20 տոկոսն է կազմում: Այդ կտորի մէջ ինչքան անագ կայ:

289. Գրավաճառը 4160 օրինակ թուաբանական խնդիրների դասագիրք և 3920 օրինակ այբբենարան տպագրեց. այդ բոլոր գրքերի տպագրութեան համար նա 186 օղմայ, 13 դաստայ և 8 թերթ թուղթ գործ ածեց: Թուաբանական խնդիրների իւրաքանչիւր գրքին զնացած թուղթը ինչքան է, եթէ որ 64 թուաբանական գրքին այնքան թուղթ գնաց, ինչքան որ 112 այբբենարանին:

290. Երկու շոգենաւ միւսնոյն նաւահանգստից միաժամանակ ճանապարհ ընկան դէպի Բաթում. առաջինը մի ժամում 14 վերստ, 225 սաժ. էր գնում, իսկ երկրորդը — 12 վերստ, 375 սաժ.: Նաւահանգստը Բաթումից ի՞նչ հեռաւորութեան վերայ էր գտնուում, եթէ որ երկրորդ շոգենաւը առաջինից 8 ժամ յետոյ հասաւ:

291. Վաճառականը երկու տեսակ սուրճ՝ խառնեց՝ մէկը — գրուանքան 58, իսկ միւսը 40 կոպէկանոց. լաւ տեսակի իւրաքանչիւր 5 գրուանքայի համար ստորին տեսակից 4 գրուանքայ վերցրեց: Վաճառականը խառնուող սուրճի գրուանքան ի՞նչ գնով պէտքէ ծախէ, որ 20 տոկոս օգուտ ստանայ:

292. Երկու տեսակ ալիւր են խառնած. մէկ տեսակի գրուանքան 8 կոպ. արժէ, իսկ միւսինը — 4. խառնուողի փուլին էլ 2 մանէթ է: Բոլոր խառնուող ալիւրը ի՞նչքան է բաշում, եթէ որ ցածր գնանի ալիւրից 2 փուլ իւր և 16 գրուանքայ է վերցրած:

293. Խանութպանը երեք տեսակ բրինձ խառնեց՝ մէկի փուլը 3 մանէթ արժէ, միւսինը — 2 մանէթ, 60 կոպ., իսկ երրորդինը — 1 մանէթ. 80 կոպ. առաջին տեսակի իւրաքանչիւր 2 փութի համար երկրորդից 3 փուլ, իսկ երրորդից 5 փուլ վերցրեց: Խանութպանը խառնուողի փուլը ի՞նչ գնով պէտք է ծախէ, որ 25 տոկոս օգուտ ստանայ:

294. Մի խանութում երեք գնողի վերայ ապրանք ծախուեցաւ. առաջինը առաւ — 24 գր. շաքար, 2 գր. թէյ և 6 գր. սուրճ, երկրորդը՝ 14 գր. շաքար, 2 գր. թէյ և 4 գր. սուրճ, իսկ երրորդը — 14 գր. շաքար, 5 գր. թէյ և 4 գր. սուրճ: Առաջին գնողը 10 մանէթ, 40 կոպ. վճարեց, երկրորդը — 7 մանէթ, 70 կոպ., իսկ երրորդը — 12 մանէթ 50 կոպ.: Ի՞նչ գնով է առնուած շաքարը, թէյը և սուրճը:

295. Մի ոսկերիչ իրար հետ երկու կտոր մետաղ հալեց. մէկը 22 գր. 48 մսխ. էր քաշում, իսկ միւսը՝ 15 գր. առաջինը իւր մէջ պարունակում էր՝ 90, իսկ երկրորդը — 80 տոկոս արծաթ: Նոր ձուլած կտորի մէջ ինչքան տոկոս արծաթ կայ:

296. Մի մարդ 2150 մանէթով 20 լուծ գոմէշ և՛ 15 լուծ եղջ պէտքէ առնէր: Նա առաջուց հաշուեց, որ իւրաքանչիւր գոմէշ 35, իսկ իւրաքանչիւր եղջ 25 մանէթով կ'առնէ. միայն պատահեցաւ, որ գոմէշների համար իւր հաշուածից 10 տոկոս աւելի, իսկ եղջների համար 10 տոկոս պակաս վճարեց: Նա իւր հաշուի մէջ որքան սխալուեց:

III. ԽՆԴԻՐՆԵՐ ԲԱՌԱԿՈՒՄԻ ԵՒ ԽՈՐԱՆԱՐԻ ԶԱՓԵՐՈՎ:

296. Ուղղանկիւն \*) բազի երկարութիւնը 56 սաժ. 2 արշ. է, իսկ լայնութիւնը՝ 14 սաժ. 1 արշին: Գտնել ամբողջ բազի մակերեսը:

298. Խոտհարքի երկարութիւնը 96 սաժ. է, իսկ լայնութիւնը — 75: Խոտհարքը քանի՞ օրավար \*\*) տեղ է բռնում:

299. Տան երկարութիւնը 9 սաժ. 2 արշ. է, լայնութիւնը 6 սաժ. 1 արշին: Տունը ի՞նչ տարածութիւն է բռնել:

300. Ճանապարհի երկարութիւնը 2 վերստ, 315 սաժէն է: իսկ լայնութիւնը — 3 սաժ.: Ճանապարհի տարածութիւնը որքան է:

301. Պարտէզի երկարութիւնը 24 սաժ. 6 ոտնաչափ (Փուտ) է, իսկ լայնութիւնը — 9 սաժ. 4 ոտնաչափ: Գտնել պարտէզի ամբողջ տարածութիւնը:

302. Յատակի տարածութիւնը 168 բառակուսի արշին է: Ինչքան է յատակի երկարութիւնը, եթէ որ նորա լայնութիւնը 12 արշին է:

303. Մի փոքրիկ անտառ 2 բառ. վերստ, 175,516 բառ. սաժ. տեղ է բռնել, որի երկարութիւնը միայն 457 սաժ. 2 արշ. է: Գտնել դորա լայնութիւնը:

304. Սենեակի երկարութիւնը 18, լայնութիւնը — 7, իսկ բարձրութիւնը — 5 արշին է: Որոշել սենեակի ծաւալը:

305. Մի տան երկարութիւնը 5 սաժ. 4 ոտնաչափ է, լայնութիւնը — 3 սաժ. 2 ոտնաչափ, իսկ բարձրութիւնը — 1 սաժ. 6 ոտնաչափ: Տան ծաւալը որքան է:

306. Արկղի երկարութիւնը 5 ոտնաչափ, 6 դիւյիմ է, լայնութիւնը — 4 ոտնաչափ, 9 դիւյիմ, իսկ բարձրութիւնը — 2 ոտնաչափ: Արկղի ծաւալը ինչքան է:

\*) Այս բաժնի բոլոր ենդիրների մէջ յիշած «մակերեսը» — «տարածութիւնը» իմանալու համար, պէտք է ուղղանկիւնու՝ մակարդակը հաշուել, իսկ «ծաւալ» ասելով — ուղղանկիւն հատուածակողմի (պրիզմայի) ծաւալն — բովանդակութիւնն՝ ինկատի ունենալ:

\*\*) Ի նկատի ունենալ օրավարի տարածութիւնը — 1200 բառակուսի սաժէն: —



307. Գոմի ծաւալը 1530 խորանարդ արշին է: Գոմն ի՞նչ բարձրութիւն ունի, եթէ որ նորա երկարութիւնը 17 արշին է, իսկ լայնութիւնը—15:

308. Շտեմարանի ծաւալը 9 խոր. արշ., 2136 խոր. վերշոկ է: Շտեմարանը ի՞նչ խորութիւն ունի, եթէ որ նորա երկարութիւնը 2 արշ. 8 վերշ. է, իսկ լայնութիւնը—2 արշ. 7 վերշ.:

309. Զրամբարի ծաւալը 20 խոր. սաժ., 160 խոր. ոտնաչափ է: Ինչքան է նորա խորութիւնը, եթէ որ երկարութիւնը 4 սաժ. 2 ոտ. է, իսկ լայնութիւնը,—1 սաժ., 6 ոտնաչափ:

310. 5 սաժէն երկարութիւն և 3 սաժէն լայնութիւն ունեցող յատակը տակտակամածելու համար ատաղձագործները հաւասար երկարութեան 36 տակտակ գործ դրին: Այդ տակտակները ի՞նչ երկարութիւն ունին, եթէ որ նոցա լայնութիւնը 6 վերշոկ է:

311. Մի գիւղացի 280 սաժ. երկարութիւն ունեցող վարելահողում ցորեն ցանեց. իւրաքանչիւր օրավարին 4 չկ. 5 գարն. ցորեն գնաց և մէկին էլ վեց օգուտ ստացաւ: Գիւղացին ինչքան ցորեն վերցրեց:

312. Մի հովիւ իւր 56 ոչխարի համար 5 սաժ. 1 արշ. երկարութիւն ունեցող փարախ շինեց: Փարախը ի՞նչ լայնութիւն ունի, եթէ որ իւրաքանչիւր ոչխարին 2 բառ. արշ. տեղ էր ընկնում:

313. Մի ջրամբար, որի երկարութիւնը 10 սաժ. 5 ոտնաչափ է, լայնութիւնը—2 սաժ. 1 ոտ., իսկ խորութիւնը—6 ոտնաչափ, ջրով լցուած է: Զրամբարումը բանի՞ դոյլ ջուր կայ, եթէ որ դոյլի ծաւալը 750 խոր. դիւլիմ է:

314. Հնձուորները 133 սաժ. 1 արշ. երկարութիւն և 54 սաժ. լայնութիւն ունեցող ցորեն ցանած արտը հնձեցին. իւրաքանչիւր օրավարից նոքա 390 խուրձ կապեցին և բոլորը դէզեր դրին: Նոքա բանի՞ դէզ դրին, եթէ որ իւրաքանչիւրում 52 խուրձ կար:

315. Գիւղացին իւր 300 սաժ. երկարութիւն և 56 սաժ. լայնութիւն ունեցող արտից կտաւահատ քաղեց և բոլոր սերմը ձէթ քաշել տուեց: Նա ինչքան ձէթ կ'ստանայ, եթէ որ իւրաքանչիւր օրավար 31 փութ սերմն էր տալիս, իսկ իւրաքանչիւր փութ—10 գր. 48 մս. ձէթ:

316. Գիւղացին իւր 96 սաժ. երկարութիւն և 75 սաժ. լայնութիւն ունեցող խոտհարքը վերտուեց և իւրաքանչիւր օրավարչափ տեղից 120 փութ խոտ ստացաւ: Այդ խոտը ձմեռը գիւղացու տասը կովին ինչքան ժամանակ բաւական կ'լինի, եթէ որ նա իւրաքանչիւրին օրական 20 գր. խոտ տայ:

317. Ներկարարը երեք սենեակի յատակ ներկեց. մէկ սենեակի երկարութիւնը 3 սաժ. 1 արշին է, իսկ լայնութիւնը—1 սաժ. 2 արշ., միւսի երկարութիւնը—4 սաժ. և լայնութիւնը 2 սաժ. 2 արշ., իսկ երրորդի երկարութիւնը—3 սաժ. 2 արշ., և լայնութիւնը—2 սաժ.: Ներկարարը ի՞նչքան փող ստացաւ, եթէ որ յատակի իւրաքանչիւր քառակուսի արշինի համար 28 կոպէկ էին վճարում:

318. Բանջարանոցի երկարութիւնը 58 սաժ. 1 արշ. է, իսկ լայնութիւնը—31 սաժ.: Այդ գետնի 456 բառ. սաժ. 3 բառ. արշ. տարածութիւնը թէ՛ անցնելու ճանապարհները և թէ՛ քառ. արշ. տարածութիւնը թէ՛ անցնելու ճանապարհները և թէ՛ ուրիշ խամ տեղերն են բռնած, իսկ մնացածները ածուներ են: Բանջարանոցումը բանի՞ ածու կայ, եթէ որ իւրաքանչիւր ածուի տարածութիւնը 8 բառ. սաժէն է:

319. Գիւղացին երկու վարելահողում ցորեն ցանեց. մէկ արտի երկարութիւնը 180 և լայնութիւնը—120 սաժ. էր, իսկ միւսը դորանից 3 անգամ պակաս: Նա բոլոր հաւաքած ցորենը ծախեց, չետվերիկը 80 կոպէկով: Բոլոր ցորենի համար գիւղացին ինչքան փող ստացաւ, եթէ որ իւրաքանչիւր օրավարից 2 չետվերտ ցորեն վերցրեց:

320. Մէկ գիւղացի մի խոտհարք ունէր, որի երկարութիւնը 200 սաժէն էր, իսկ լայնութիւնը—90. իւրաքանչիւր օրավարչափ տեղից նա 150 փութ խոտ վերտուեց և բոլորը ծախեց: Գիւղացին ինչքան փող ստացաւ, եթէ որ հաւաքած խոտի չորրորդ մասի փութը 30 կոպէկով, իսկ մնացածինը՝ 26 կոպէկով ծախեց:

321. Մի տանիք, որ երկու թերուածք ունի, երկաթի թերթերով ծածկեցին. իւրաքանչիւր թերթը 6 գր. 72 մս. էր քաշում, իսկ երկարութիւնը և լայնութիւնն էլ մէկ մէկ արշին



IV. ԺԱՄԱՆԱԿ ՀԱՇՈՒՅԼՈՒ ԽՆԻԻՐՆԵՐ:

332. Օրուայ \*) սկզբից ինչքա՞ն ժամանակ է անցկացել՝ ա) մինչև միևնոյն օրուայ 3 ժամն և 45 րոպէն, ճաշից յետոյ. բ) մինչև հետեւեալ օրուայ առաւօտեան 6 ժամ և 20 րոպէն:

333. Ինչքա՞ն ժամանակ է անցկացել—ա) չորեքշաբթուայ կէս գիշերից մինչև միևնոյն շաբաթուայ հինգ շաբթի՝ երեկոյեան ժամի 5-ը բ)՝ երեքշաբթի կէս գիշերից մինչև միևնոյն շաբաթուայ շաբաթ օրն—առաւօտեան 7 ժամ և 20 րոպէն. գ) երկու շաբթի կէս գիշերից մինչև հետեւեալ շաբաթուայ շաբաթ օրը երեկոյեան 7 ժամ և 15 րոպէն:

334. Ի՞նչքան ժամանակ է անցկացել՝ ա) առաւօտեան ժամի 4-ից և 30 րոպէից մինչև միևնոյն օրուայ՝ երեկոյեան ժամի 9-ն և 16 րոպէն. բ) առաւօտեան 5 ժամից և 15 րոպէից մինչև միևնոյն օրուայ գիշերը՝ ժամի 11-ն և 18 րոպէն. գ) երեկոյեան 9 ժամից և 25 րոպէից մինչև հետեւեալ օրուայ՝ առաւօտեան 7 ժամն և 50 րոպէն:

335. Ինչքա՞ն ժամանակ է անցկացել՝ ա) երեքշաբթուայ ժամի 2-ից և 12 րոպէից՝ ճաշից յետոյ՝ մինչև միևնոյն շաբթուայ հինգշաբթին—գիշերուայ 11 ժամն և 20 րոպէն. բ) չորեքշաբթի երեկոյեան 8 ժամից և 50 րոպէից մինչև հետեւեալ շաբաթուայ երեքշաբթին՝ ցերեկուայ 1 ժամ և 14 րոպէն. գ) հինգշաբթի առաւօտեան 7 ժամից և 40 րոպէից մինչև միևնոյն շաբաթուայ ուրբաթ՝ ժամի 3-ն և 25 րոպէն՝ ճաշից յետոյ:

336. Յունուարի մէկից ինչքա՞ն ժամանակ է անցկացել՝ ա) մինչև նոյն ամսի 12-ն՝ ճաշից յետոյ՝ ժամի 3-ն և 40 րոպէն. բ) մինչև նոյն ամսի 25-ն՝ առաւօտեան ժամի 9-ն և 24 րոպէն. գ) մինչև նոյն ամսի 27-ն՝ գիշերուայ ժամի 11-ն և 35 րոպէն:

337. Տարուայ սկզբից քանի՞ ամիս և քանի՞ օր է անցկացել՝ ա) մինչև միևնոյն տարուայ Մարտի 15-ն, բ)՝ մինչև Յուլիսի 25-ն գ) —մինչև Դեկտեմբերի 9-ն:

\*) Օրուայ սկիզբը հաշուում է գիշերուայ ժամի 12-ից. Օրը (գիշեր և ցերեկ) 24 ժամ է:

338. Հասարակ տարուայ սկզբից քանի՞ օր է անցկացել՝ ա) մինչև միևնոյն տարուայ Փետրուարի 4-ն. բ) մինչև Մայիսի 12-ն. գ) մինչև Յուլիսի 27-ն. դ) մինչև Նոյեմբերի 25-ն:

339. Նահանջ տարուայ սկզբից քանի՞ օր է անցկացել՝ ա) մինչև միևնոյն տարուայ Մարտի 3-ն. բ) մինչև Յունիսի 27-ն. գ) մինչև Օգոստոսի 17-ն. դ) մինչև Հոկտեմբերի 14-ն:

340. Քանի՞ օր է անցկացել՝ ա) 1880 թուականի սկզբից մինչև միևնոյն տարուայ Յունիսի 8-ն. բ) 1875 թու. սկզբից մինչև միևնոյն տարուայ Սեպտեմբերի 15-ն:

341. Քանի՞ տարի, ամիս և օր է անցկացել՝ ա) 1837 թ. Փետրուարի 15-ից մինչև 1865 թ. Մայիսի 4-ն. բ) 1868 թ. Դեկտեմբերի 24-ից մինչև 1884 թ. Մարտի 16-ն:

342. Քանի՞ տարի և օր է անցկացել՝ ա) 1867 թ. Մարտի 27-ից մինչև 1881 թ. Սեպ. 12-ն. բ) 1864 թ. Ապրիլի 18-ից մինչև 1883 թ. Մարտի 6-ն. գ) 1852 թ. Ապրիլի 5-ից մինչև 1876 թ. Դեկտեմբերի 23-ն:

343. Օրուայ սկզբից անց է կացել՝ 6 ժամ, 15 Ժ., 17 Ժ., 20 ժամ: Ո՞ր ժամն է մտնում:

344. Չորեքշաբթուայ կէս գիշերից անց է կացել՝ 25 ժամ, 35 Ժ., 50 Ժ., 87 Ժ., 100 Ժ.: Ինչ օր և այն էլ միևնոյն օրուայ ո՞ր ժամն է մտնում:

345. Ուրբաթ օրուայ առաւօտեան ժամի 5-ից և 48 րոպէից անց է կացել՝ 16 ժամ, 15 րոպէ. 28 Ժ. 36 րոպ., 43 Ժ. 12 րոպ., 67 Ժ. 29 րոպ., 95 Ժ. 37 րոպէ: Ինչ օր և այն էլ միևնոյն օրուայ ո՞ր ժամն է մտնում:

346. Յունուարի մէկից անց է կացել՝ 6 օր, 5 ժամ, 17 րոպէ. 18 օր, 17 Ժ., 50 րոպ.: Ինչ օր և այն էլ միևնոյն օրուայ ո՞ր ժամն է մտնում:

347. Քրիստոսի ծննդից անց է կացել՝ 1856 տարի, 1879 տարի, 1885 տ., 1891 տ.: Ո՞ր տարին է մտնում:

348. Տարուայ սկզբից անց է կացել՝ 2 ամիս, 15 օր. 5 ամիս, 25 օր. 11 ամիս, 8 օր: Ո՞ր ամիսը և այն էլ միևնոյն ամսուայ ո՞ր օրն է մտնում:

349. Հասարակ տարուայ սկզբից անց է կացել՝ 64 օր, 85

օր, 176 օր, 215 օր, 357 օր: Ո՞ր ամիսը և այն էլ միևնույն ամսուայ ո՞ր օրն է մտնում:

**350.** Նահանջ տարուայ սկզբից անց է կացել՝ 73 օր, 12 օր, 175 օր, 248 օր, 296 օր, 325 օր: Ո՞ր ամիսը և այն էլ միևնույն ամսուայ ո՞ր թիւն է մտնում:

**351.** 1863 թ. սկզբից անց է կացել՝ 75 օր, 136 օր, 218 օր, 457 օր, 618 օր: Ո՞ր տարին, ամիսն և ամսաթիւն է մտնում:

**352.** 1872 թ. սկզբից անց է կացել՝ 89 օր, 217 օր, 329 օր, 678 օր, 1000 օր: Ո՞ր տարին, ամիսն և ամսաթիւն է մտնում:

**353.** 1866 թ. Յունուարի 15-ից անց է կացել՝ 8 տարի, 6 ամիս, 18 օր, 12 տարի, 2 ամիս, 25 օր, 19 տարի, 10 ամիս, 14 օր: Ո՞ր տարին, ամիսն և ամսաթիւն է մտնում:

**354.** 1867 թ. Նոյեմբերի 27-ից անց է կացել՝ 4 տարի 5 ամիս, 19 օր, 7 տ., 10 ամիս, 26 օր: Ո՞ր տարին, ամիսն և ամսաթիւն է մտնում:

**355.** 1863 թ. Յունուարի 18-ից անց է կացել՝ 7 տարի, 92 օր, 74 տ., 135 օր, 15 տ., 269 օր, 17 տ., 246 օր, 20 տ., 150 օր: Ո՞ր տարին, ամիսն և ամսաթիւն է մտնում:

**356.** 1868 թ. Դեկտեմբերի 25-ից անց է կացել՝ 3 տարի 90 օր, 9 տ., 276 օր, 12 տ., 357 օր: Ո՞ր տարին, ամիսն և ամսաթիւն է մտնում:

**357.** Մի աստիճանաւոր Յունիսի 15-ից մինչև միևնույն տարուայ Սեպտեմբերի 17-ն արձակուրդ ստացաւ: Նա քանի՞ օր էր արձակուրդ ստացել:

**358.** Տան շինութիւնը Մայիսի 25-ից սկսեցին և միևնույն տարուայ Օգոստոսի 5-ն վերջացրին: Որքա՞ն ժամանակ տևեց տան շինութիւնը:

**359.** Մի շողենաւ Յուլիսի 9-ն, առաւօտեան ժամի 9-ն՝ դուրս եկաւ և նշանակած տեղը հասաւ միևնույն տարուայ Օգոստոսի 2-ին՝ ճաշից յետոյ, ժամի էլ 2-ն: Նա ճանապարհին որքա՞ն ժամանակ մնաց:

**360.** Ուսումնարանի ամարային արձակուրդը Մայիսի 28-ից

սկսուեց և 75 օր տևեց: Ուսումնարանի զբաղմունքները նորից ե՞րբ սկսուեցան:

**361.** Սևանայ լիճը Նոյեմբերի 26-ին սառաւ և 4 ամիս, 18 օր սառուցի տակ մնաց: Նա ե՞րբ բացուեցաւ:

**362.** Մի երեխայ Յուլիսի 24-ին, երեկոյեան ժամի 7-ին ծնեց և 18 օր, 14 ժամ ապրեց: Երեխան ե՞րբ մեռաւ:

**363.** 1891 թ. Մարտի 3-ին մեծ պատի բռն բարիկենդանն էր: Զատիկը ե՞րբ եղաւ:

**364.** Մի ծառայ 7 ամիս, 28 օր ծառայելով՝ Դեկտեմբերին դուրս գնաց: Նա ե՞րբ մտաւ ծառայութիւն:

**365.** Պատի լարած ժամացոյցը եօթն օրից և 6 ժամից յետոյ կանգնեց: Նա ե՞րբ կ'կանգնի, եթէ որ Յուլիսի 4-ին՝ առաւօտեան ժամի 5-ին է լարած:

**366.** Ռուսաց թագաւորութիւնը հիմնուեցաւ 862 թ. \*) Գրիստոսի ծն. յետոյ: Որքա՞ն ժամանակ է անցել մինչև ներկայ թուականն:

**367.** Օսմանեան կայսրութիւնը հիմնուեցաւ 1232 թ.: Մինչև ներկայ տարին ինչքա՞ն ժամանակ է անցել:

**368.** Ռուսաց Աղէքսանդր Բ. կայսրն Ռուսաստանի մէջ ճորտութիւնը վերջացրեց 1861 թ. Փետր. 19: Բանի՞ տարի, ամիս և օր է անցկացել մինչև այսօր:

**369.** Ս. Էջմիածնի վանքը Հաղբատայ վանքից 665 տարի առաջ է շինած: Ե՞րբ շինուեցաւ Ս. Էջմիածնի մայր եկեղեցին, եթէ որ Հաղբատայ վանքը 968 թուին է շինուել:

**370.** Ս. Էջմիածնի հոգևոր ձեմարանը բացուեց 1874 թ. Սեպ. 28-ն, իսկ Տիխիսի Ներսիսեան դպրոցը— 1824 թ. Մայիսի 6-ն: Այդ երկու ուսումնարանների մէջ ինչքա՞ն ժամանակ անցկացաւ:

**371.** Ներսէս Ե-դ կաթողիկոսը Ս. Էջմիածնի գահը բարձրացաւ 1843 թ. 25 Փետր., իսկ Գէորգ Դ-ը 1866 թ. 18 դեկտեմբերի: Դոցա մէջ ինչքա՞ն ժամանակ է անցկացել:

\*) 366, 367, 368 եւ 376-րդ խնդիրները լուծելիս պետք է աչքի առաջ ունենալ այն տարեթիւրը, ինչ ժամանակ որ դոքա առաջակուում են:

372. Ռուսները Երևանը Պարսից ձեռքից առան 1828 թ. Փետր. 10-ն իսկ դորանից 49 տարի, 8 ամիս և 26 օր յետոյ Տաճկաստանից Կարսը վերցրին: Կարսի առումն ո՞ր թուին, ամսին և ամսաթուին եղաւ:

373. Մակար առաջին կաթողիկոսը Ս. Էջմիածնի Հայրապետական գաճը բարձրացաւ 1885 թ. Նոյեմբերի 22-ն. կաթողիկոսութիւն արեց 5 տարի, 5 ամիս և 6 օր: Ե՞րբ վախճանուեցաւ Մակար Ա-ը:

374. Ներսէս եպիսկոպոս Վարժապետեանը Կոստանդնուպոլսի պատրիարք ընտրուեցաւ 1874 թ. Ապրիլի 24 ն. 10 տարի, 6 ամիս և 2 օր պատրիարքութիւն անելուց յետոյ վախճանուեցաւ: Ո՞ր թուին եղաւ Ներսէս պատրիարքի մահը:

375. Վրաստանը Ռուսաստանի հետ միացաւ 1801 թ. Սեպտեմբերի 12-ն, իսկ սորանից 57 տարի, 11 ամիս և 13 օր յետոյ, իմամ Շամիլի գերի բռնուելովը, Դաղստանը նուաճուեցաւ: Դաղստանի վերջնական նուաճումն ո՞ր թուին եղաւ:

376. Հայոց սոմարը նորոգուեցաւ Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսի օրով, Քրիստոսի 551 թ.: Այժմ Հայոց ո՞ր թիւն է:

377. Մեր կաթողիկոսութիւնը Կիրիլիայից Ս. Էջմիածին տեղափոխուեց Հայոց 890 թուականին: Որոշել թէ՛ Քրիստոսի ո՞ր թուին էր:

378. Լանկ Թէմուրն Հայաստանը աւերեց Հայոց 836 թ.: Որոշել թէ՛ Քրիստոսի ո՞ր թուականին էր:

379. Քրիստոսի 1605 թ. պարսից Շահ-Աբաս Թագաւորը շատ հոյ ընտանիքներ զաղթեցրեց Պարսկաստան: Այդ դէպքը Հայոց ո՞ր թուին եղաւ:

### Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ն

#### ՕՐԻՆԱԿՆԵՐ ԿՈՏՈՐԱԿՆԵՐՈՎ.

1, ԿՈՏՈՐԱԿԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄՆ ԱՄԲՈՂԶ ԹԻՈՎ.

- |    |                              |     |                                 |     |                              |     |                              |
|----|------------------------------|-----|---------------------------------|-----|------------------------------|-----|------------------------------|
| 1. | $\frac{2}{3} \times 4$ .     | 10. | $\frac{5}{8} \times 4$ .        | 19. | $\frac{2}{3} \times 9$ .     | 28. | $\frac{5}{6} \times 4$ .     |
| 2. | $\frac{3}{4} \times 5$ .     | 11. | $\frac{7}{9} \times 3$ .        | 20. | $\frac{3}{4} \times 8$ .     | 29. | $\frac{3}{14} \times 6$ .    |
| 3. | $\frac{5}{12} \times 7$ .    | 12. | $\frac{8}{15} \times 5$ .       | 21. | $\frac{5}{6} \times 18$ .    | 30. | $\frac{13}{20} \times 8$ .   |
| 4. | $\frac{7}{8} \times 21$ .    | 13. | $\frac{5}{24} \times 8$ .       | 22. | $\frac{3}{8} \times 40$ .    | 31. | $\frac{5}{48} \times 30$ .   |
| 5. | $\frac{7}{18} \times 23$ .   | 14. | $\frac{5}{64} \times 16$ .      | 23. | $\frac{7}{15} \times 45$ .   | 32. | $\frac{3}{16} \times 24$ .   |
| 6. | $\frac{4}{15} \times 14$ .   | 15. | $\frac{13}{48} \times 12$ .     | 24. | $\frac{17}{24} \times 72$ .  | 33. | $\frac{13}{30} \times 45$ .  |
| 7. | $\frac{2^5}{6} \times 11$ .  | 16. | $\frac{4^{17}}{36} \times 9$ .  | 25. | $\frac{3^4}{9} \times 27$ .  | 34. | $\frac{7^5}{6} \times 16$ .  |
| 8. | $\frac{3^5}{32} \times 25$ . | 17. | $\frac{5^9}{28} \times 14$ .    | 26. | $\frac{4^7}{12} \times 60$ . | 35. | $\frac{6^7}{24} \times 36$ . |
| 9. | $\frac{4^7}{24} \times 29$ . | 18. | $\frac{8^{11}}{96} \times 32$ . | 27. | $\frac{5^9}{16} \times 80$ . | 36. | $\frac{4^5}{28} \times 70$ . |

2. ԿՈՏՈՐԱԿԻ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՄԲՈՂԶ ԹԻՈՎ.

- |     |                        |     |                             |     |                         |     |                        |
|-----|------------------------|-----|-----------------------------|-----|-------------------------|-----|------------------------|
| 37. | $\frac{6}{7} : 3$ .    | 44. | $\frac{60^{24}}{25} : 12$ . | 51. | $\frac{11}{15} : 20$ .  | 58. | $\frac{3}{4} : 27$ .   |
| 38. | $\frac{8}{9} : 4$ .    | 45. | $\frac{70^{56}}{75} : 14$ . | 52. | $\frac{21^3}{4} : 7$ .  | 59. | $\frac{12}{25} : 36$ . |
| 39. | $\frac{15}{16} : 5$ .  | 46. | $\frac{2}{7} : 3$ .         | 53. | $\frac{32^5}{12} : 8$ . | 60. | $\frac{15}{16} : 60$ . |
| 40. | $\frac{18}{25} : 6$ .  | 47. | $\frac{3}{4} : 5$ .         | 54. | $\frac{81^5}{8} : 9$ .  | 61. | $\frac{3^2}{3} : 22$ . |
| 41. | $\frac{32}{75} : 8$ .  | 48. | $\frac{9}{20} : 4$ .        | 55. | $\frac{2}{5} : 4$ .     | 62. | $\frac{2^3}{8} : 95$ . |
| 42. | $\frac{48}{55} : 16$ . | 49. | $\frac{2}{3} : 15$ .        | 56. | $\frac{3}{4} : 6$ .     | 63. | $\frac{3^2}{9} : 87$ . |
| 43. | $\frac{10^6}{9} : 5$ . | 50. | $\frac{7}{12} : 10$ .       | 57. | $\frac{4}{9} : 8$ .     | 64. | $\frac{6}{7} : 4$ .    |

- |     |                       |     |                         |     |                        |     |                        |
|-----|-----------------------|-----|-------------------------|-----|------------------------|-----|------------------------|
| 65. | $\frac{9}{10} : 15$ . | 67. | $\frac{15}{32} : 6$ .   | 69. | $\frac{27}{50} : 18$ . | 71. | $\frac{27^5}{6} : 5$ . |
| 66. | $\frac{8}{9} : 12$ .  | 68. | $\frac{3^5}{48} : 10$ . | 70. | $\frac{11^2}{3} : 3$ . | 72. | $\frac{38^7}{8} : 6$ . |

3. ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԿԸՃԱՏՈՒՄՆ.

73.	12/24'	15/45'	14/70'	16/64'	15/90'
74.	3/36'	4/72'	5/100'	2/80'	13/96'
75.	10/15'	24/32'	48/60'	70/84'	63/72'
76.	20/75'	27/48'	12/100'	20/96'	35/360'
77.	22/33'	89/52'	95/114'	116/145'	124/279'
78.	65/156'	110/170'	87/290'	111/147'	205/245'

4. ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՅՏԱՐԱՐԻ ԲԵՐԵԼԸ:

79. Հետևեալ կոտորակները տասներկուերորդական մասներով արտայայտել— $1/2, 2/3, 3/4, 5/6$ :

80. Հետևեալ կոտորակները քառասուներորդական մասներով արտայայտել— $1/2, 7/8, 3/4, 3/5, 9/20, 7/10$ :

81. Հետևեալ կոտորակները եօթնասունն և երկուերորդական մասներով արտայայտել— $1/2, 2/3, 3/4, 5/6, 7/8, 5/12, 11/18, 13/24, 25/36$ :

82. Հետևեալ կոտորակները ինսուն և վեցերորդական մասներով արտայայտել  $1/2, 1/6, 3/4, 5/8, 2/3, 7/12, 9/16, 11/32, 13/48, 17/24$ :

83. Հետևեալ կոտորակները հարիւր երորդական մասներով արտայայտել— $1/2, 3/4, 4/5, 7/10, 27/50, 17/25, 19/20$ :

Հետևեալ կոտորակները ամենափոքր ընդհանուր յայտարարի բերել—

84.	$1/2, 1/3$	88.	$12/25, 3/4$	92.	$29/100, 13/20$	96.	$1/6, 1/8$
85.	$1/3, 1/4$	89.	$4/5, 15/32$	93.	$17/24, 25/72$	97.	$5/16, 7/24$
86.	$1/5, 2/3$	90.	$1/2, 1/6$	94.	$35/96, 9/16$	98.	$4/15, 5/12$
87.	$5/8, 7/9$	91.	$5/88, 7/32$	95.	$19/25, 43/300$	99.	$11/20, 19/50$

100.	$25/48, 15/32$	106.	$5/8, 13/36, 17/24$
101.	$9/40, 23/60$	107.	$8/20, 11/16, 7/8$
102.	$1/2, 2/3, 4/5$	108.	$1/30, 2/75, 31/100$
103.	$2/3, 3/4, 1/5$	109.	$1/20, 1/36, 1/48$
104.	$5/6, 13/90, 7/18$	110.	$11/60, 31/90, 3/8$
105.	$29/75, 2/3, 4/15$	111.	$7/50, 13/60, 5/24$

112.	$1/40, 5/48, 1/72$
113.	$3/32, 7/80, 3/50$

5. ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄՆ:

114.	$1/2 + 2/3$	124.	$1/2 + 5/6$
115.	$2/3 + 1/4$	125.	$2/3 + 7/12$
116.	$4/5 + 1/3$	126.	$5/6 + 11/18$
117.	$3/4 + 1/5$	127.	$17/48 + 5/6$
118.	$61/9 + 53/4$	128.	$37/8 + 511/32$
119.	$93/5 + 167/8$	129.	$723/60 + 811/12$
120.	$263/8 + 175/9$	130.	$1417/20 + 643/100$
121.	$482/3 + 3615/32$	131.	$2313/24 + 1925/72$
122.	$5916/25 + 123/4$	132.	$3521/200 + 4723/40$
123.	$374/5 + 457/24$	133.	$2819/30 + 3679/150$

134.	$1/6 + 1/8$	144.	$1/2 + 2/3 + 3/5$
135.	$3/4 + 5/6$	145.	$1/3 + 2/5 + 3/7$
136.	$11/15 + 5/12$	146.	$7/24 + 11/18 + 7/72$
137.	$25/32 + 13/48$	147.	$2/3 + 7/24 + 13/96$
138.	$923/24 + 37/19$	148.	$3/4 + 8/15 + 37/60$
139.	$637/42 + 815/28$	149.	$7/25 + 53/100 + 3/4$
140.	$427/40 + 29/16$	150.	$45/12 + 69/14 + 25/84$
141.	$617/18 + 319/30$	151.	$823/48 + 13/16 + 11/12$
142.	$929/100 + 819/150$	152.	$1/2 + 1/4 + 1/6 + 1/18 + 1/36$
143.	$671/90 + 731/60$	153.	$5/28 + 3/14 + 2/7 + 3/4 + 1/2$

154.  $38\frac{4}{15} + 16\frac{17}{25} + 5\frac{1}{3}$     156.  $25\frac{13}{36} + 17\frac{5}{8} + 9\frac{11}{24}$   
 155.  $29\frac{3}{4} + 6\frac{7}{12} + 24\frac{7}{15}$     157.  $34\frac{3}{16} + 5\frac{13}{20} + 27\frac{29}{40}$   
 158.  $12\frac{1}{75} + 4\frac{1}{24} + 5\frac{1}{20}$   
 159.  $8\frac{5}{36} + 3\frac{2}{45} + 9\frac{5}{48}$

6. ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ՀԱՆՈՒՄՆ.

160.  $\frac{1}{2} - \frac{1}{3}$     163.  $\frac{4}{5} - \frac{3}{4}$     166.  $\frac{7}{8} - \frac{23}{48}$   
 161.  $\frac{1}{3} - \frac{1}{4}$     164.  $\frac{7}{8} - \frac{2}{3}$     167.  $\frac{2}{3} - \frac{13}{30}$   
 162.  $\frac{3}{4} - \frac{2}{5}$     165.  $\frac{17}{18} - \frac{5}{6}$     168.  $\frac{11}{12} - \frac{23}{60}$   
 169.  $\frac{19}{32} - \frac{29}{96}$     170.  $\frac{1}{4} - \frac{1}{6}$     171.  $\frac{5}{8} - \frac{5}{12}$   
 172.  $\frac{11}{20} - \frac{2}{15}$     179.  $83 - 57\frac{49}{72}$     186.  $23\frac{11}{24} - \frac{3}{4}$   
 173.  $\frac{29}{36} - \frac{13}{24}$     180.  $9\frac{3}{4} - 5\frac{2}{3}$     187.  $12\frac{5}{6} - \frac{7}{8}$   
 174.  $\frac{15}{28} - \frac{5}{42}$     181.  $30\frac{5}{8} - 12\frac{2}{5}$     188.  $40\frac{5}{12} - \frac{14}{15}$   
 175.  $7 - \frac{3}{4}$     182.  $15\frac{7}{12} - 6\frac{29}{72}$     189.  $35\frac{27}{50} - \frac{19}{20}$   
 176.  $25 - \frac{5}{18}$     183.  $43\frac{9}{10} - 18\frac{1}{15}$     190.  $16\frac{1}{15} - 9\frac{2}{3}$   
 177.  $28 - 6\frac{13}{20}$     184.  $61\frac{11}{16} - 47\frac{5}{24}$     191.  $20\frac{5}{24} - 12\frac{47}{72}$   
 178.  $50 - 38\frac{16}{25}$     185.  $8\frac{1}{3} - \frac{1}{2}$     192.  $31\frac{9}{80} - 17\frac{9}{16}$   
 193.  $62\frac{7}{15} - 25\frac{43}{60}$     196.  $13\frac{3}{8} - 9\frac{5}{6}$   
 194.  $84\frac{13}{20} - 57\frac{89}{100}$     197.  $31\frac{7}{12} - 18\frac{14}{15}$   
 195.  $9\frac{1}{6} - 5\frac{3}{4}$     198.  $42\frac{13}{32} - 23\frac{35}{48}$   
 199.  $70\frac{8}{15} - 36\frac{19}{25}$

7. ԲԱԶՄԱԳԱՏԿՈՒՄՆ ԿՈՏՈՐԱԿՈՎ:

200.  $8 \times \frac{2}{5}$     204.  $3 \times \frac{4}{15}$   
 201.  $14 \times \frac{5}{9}$     205.  $24 \times \frac{13}{72}$   
 202.  $16 \times \frac{3}{4}$     206.  $6 \times \frac{5}{8}$   
 203.  $60 \times \frac{7}{12}$     207.  $36 \times \frac{5}{27}$

208.  $\frac{7}{8} \times \frac{2}{3}$     215.  $5 \text{ գրուանք} \times \frac{5}{8}$   
 209.  $\frac{5}{6} \times \frac{7}{10}$     216.  $18 \text{ սատ} \times \frac{2}{3}$   
 210.  $\frac{2}{9} \times \frac{3}{5}$     217.  $25 \text{ փուծ} \times \frac{4}{5}$   
 211.  $\frac{45}{64} \times \frac{8}{15}$     218.  $16 \text{ չտ} \times \frac{13}{32}$   
 212.  $\frac{13}{12} \times \frac{4}{9}$     219.  $12 \text{ ժամ} \times \frac{11}{15}$   
 213.  $\frac{26}{3} \times \frac{9}{16}$     220.  $6\frac{3}{4} \text{ գրուանք} \times \frac{5}{12}$   
 214.  $21\frac{3}{5} \times \frac{35}{36}$     221.  $42\frac{1}{2} \text{ վերստ} \times \frac{9}{25}$

222. (2 արշ. 13 վերշոկ)  $\times \frac{3}{4}$   
 223. (2 գրուանք. 38 մսխ.)  $\times \frac{9}{20}$   
 224. (3 ժամ 40 ըողէ)  $\times \frac{7}{15}$   
 225. (42 սատ. 2 ոտնաչափ)  $\times \frac{5}{16}$   
 226. (4 չտ.  $1\frac{3}{4}$  չկ.)  $\times \frac{8}{9}$   
 227. (2 փուծ  $32\frac{1}{2}$  գր.)  $\times \frac{7}{10}$   
 228. (1 գրուանք.  $5\frac{1}{4}$  մսխ.)  $\times \frac{2}{15}$

8. ԲԱԺԱՆՈՒՄՆ ԿՈՏՈՐԱԿՈՎ:

229.  $13 : \frac{3}{4}$     232.  $7 : \frac{14}{25}$     235.  $\frac{8}{27} : \frac{2}{3}$   
 230.  $36 : \frac{4}{15}$     233.  $42 : \frac{8}{15}$     236.  $\frac{25}{48} : \frac{5}{8}$   
 231.  $81 : \frac{9}{28}$     234.  $75 : \frac{12}{35}$     237.  $\frac{3}{5} : \frac{9}{20}$   
 238.  $\frac{27}{32} : \frac{3}{4}$   
 239.  $26\frac{1}{4} : \frac{5}{6}$   
